ՀՅԴ Պատմական



ԴՐՕՇԱԿ



Դեկտեմբեր
N 12 (1603)
2008

ԴՐՕՇԱԿ

ՀՅԴ Պատմաթերթ

ԴՐՕՇԱԿ
ՀՅԴ Պաշտօնաթերթ



"Դրօշակ"
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
Ռուբեն Հովսեփյան

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**
Համակարգչային շարվածքը՝
Ս. Խաչատրյանի
Ձեւավորումը՝ **Մ. Հովսեփյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Միհր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

"Droshak" monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chef: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

Խմբագրական

2008 թուականի դասերը 2

Հաղորդագրություն 6

Հայ դաս

Արևմուտքի անկումը
(Վուդրո Վիլսոնը և արդարացի աշխարհակարգի հաստատման ամերիկյան խոյանքը): Շարունակություն 7

Խորհրդարանական կյանք

ՀՅԴ խմբակցության մոտեցումները ՀՀ 2009 թ. պետական բյուջեի մասին օրինագծի և միջազգային ֆինանսական և տնտեսական ճգնաժամի մարտահրավերներին դիմագրավելու վերաբերյալ 12

Միավորվենք հանուն Երևանի և Երևանցիների շահերի 15

Տարածաշրջան

Սամցխե-Ջավախք հայկական տարածաշրջանի ժողովրդագրական վիճակը վերջին 20-ամյակում 1988-2008 թթ. 21

Հարցազրույց

ՀԱՊԿ կայացած կառույց՝ կայացման ճանապարհին 24

Մտավորական ամբիոն

Հայերիս պատմության գլխավոր դասը 27
Փորձություն 29

Տեսակետ

Կճանաչի արդյո՞ք նոր նախագահը
Հայոց ցեղասպանությունը 31

Բացահայտում

Թուրքիան պատրաստվում էր դեսանտ իջեցնել Թեհրանում 34

Դաշնակցական բեմ

Սիմոն Վրացեանի ինքնակենսագրութիւնը 36

Խմբագրի անկյուն

Կարգավորման խութերը 43

«Դրօշակ»-ը 100 տարի առաջ

Մեծ կնճիռների հանդեպ 45

Նոր գրքեր

Հավատամք 47

Պատկերասրահ

Արմեն Խոջոյան 48

Digitized by ARF PR Office

2008 թուականի դասերը

Անցնող տարին Հայաստանի ու հայութեան համար լի էր քաղաքական խոշոր նշանակութիւն ունեցող գործընթացներով եւ անակնկալներով:

Տարին մեկնարկեց ՀՀ նախագահական ընտրութիւնների նախընտրական արշաւու: Քաղաքական դաշտը, որ սաղմնային ձեւաւորում էր ստացել նախորդ տարուայ խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքում, սկսեց կտրուկ դիմափոխուել: Խորհրդարանական ուժերի դահիճանողական թեւը, կենտրոն աջը, յանձինս ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի, լիբերալ աջը՝ ՕԵԿ-ի, կենտրոն ձախը՝ ՀՅԴ-ի եւ ծայրայեղ լիբերալ աջը՝ «Ժառանգութեան» (արտախորհրդարանական կոչ ընդդիմութեան՝ ՀՀՇ-ին միաւորուած), հանդէս եկան առանձին թեկնածուների դաշտանութեամբ: Արդիւնքում ՀՀ նախագահ ընտրուեց Սերժ Սարգսեանը:

Աղա վրայ հասաւ ողբերգական օրը, հայ ժողովրդի նորագոյն դատմութեան տխուր էջերից մէկը՝ մարտի մէկը: «*Մեղաւորներ միշտ կարելի է որոնել երկու կողմում էլ,*- այս իրադարձութեան կապակցութեամբ գրում է «Դրօշակն» իր 2008 թ. փետրուար-մարտի համարում,- *բայց թէ, վերջին հաշուով, ո՞ւմ է հասցէագրում գլխաւոր դատապարտանաստուութիւնը, միանշանակ համոզուած ենք՝ իշխանութիւններին: Իսկ դատապարտանաստուութեան ասելիքին համադատապարտան ակնկալում է ելքի որոնման եւ իրավիճակի նորմալացման իմաստնութիւն, նախաձեռնութիւն եւ կամք*»: Իրավիճակի լիցքաթափման համար, թէեւ որոշ քայլեր ձեռնարկեց նորընտիր նախագահը, համագործակցութեան ձեռք մեկնելով քաղաքական բոլոր ուժերին եւ կազմաւորելով կոալիցիոն կառավարութիւն, այնուամենայնիւ, Հայաստանի քաղաքական դաշտը շարունակում է մնալ լարուած: Իշխանութիւն-ընդդիմութիւն փոխյարաբերութիւնների նորմալացման ուղղութեամբ առնուած քայլերը (երկխօսութիւն, արտախորհրդարանական ընդդիմութեան համար քաղաքական դերակատարութեան ապահովում եւ այլն) ակնկալուած արդիւնքները դեռեւս չեն տուել:

ՀՅ Դաշնակցութիւնը, դատապարտանաստուութեան բարձր գիտակցութեամբ, մաս կազմեց նոր կոալիցիային.

«Կոալիցիային մասնակցելու ՀՅԴ կեցուածքի հիմքում ընկած են ոչ թէ կադրային, այլ ծրագրային հարցերը,- գրել է «Դրօշակն» իր 2008 թ. ապրիլի համարում,- *այլ խօսքով՝ մենք մեր նախընտրական խոստումներին հաւատարիմ, այսուհետ էլ ձգտելու ենք, ոչ թէ սոսկական իշխանափոխութեան, այլ գերազանցապէս համակարգային փոփոխութեան»*:

2008 թ. մայիսի 21-26-ին Ծաղկաձորում գումարուեց ՀՅԴ 30-րդ Ընդհանուր Ժողովը, որն ի թիւս բազմաթիւ համազգային հարցերի, խորհային վերլուծութեան ենթարկեց նաեւ կոալիցիայում մեր մասնակցութեան հարցը եւ որոշումներ ընդունեց մեր սանձնած դերի վերաբերեալ: Այս մասին կարդում ենք ՀՅԴ 30-րդ Ընդհանուր Ժողովի բանաձեւերում. *«Հեսամուս լինել Հայաստանում ժողովրդավարութեան հաստատմանը, քաղաքացիական հասարակութեան ձեւաւորմանը, վարել լիարժէք ընկերային արդարութեան եւ համերաշխութեան միտուած, Հայաստանի տնտեսութեան հզօրացումը ապահովող քաղաքականութիւն: Հայաստանում պէտք է հաստատի օրէնքի գերակայութիւն: Մեր նպատակադրումն է ազատ անհատ, արդար հասարակութիւն ստեղծելը»* (Քաղուածք ՀՅԴ 30-րդ Ընդհանուր Ժողովի բանաձեւերից, գումարուած 2008 թ. մայիսի 21-26, Ծաղկաձոր):

Մեր տարածաշրջանում խաղաղ տարի չէր 2008 թուականը. վրաց-օսական պատերազմով մի նոր ժամանակաշրջան սկսուեց ինչպէս տարածաշրջանի, այնպէս էլ աշխարհի պատմութեան մէջ: Դիւանագիտական եւ իրաւագիտական նոր տերմինաբանութեամբ յատկանշուող այս ժամանակաշրջանում, երբ նորից շրջանառութեան մէջ դրուեց սառը պատերազմի ժամանակներից մոռացուած «ազգերի ինքնորոշման իրաւունքը», նոր հեռանկարներ են պարզւում ճնշուած ազգերի ազգային հարցերի արդար լուծման համար: Դեռ կանուխ է այս մասին լաւատեսութեամբ հանդէս գալ, քանզի առայժմ այդ իրաւունքի մասին, ինչպէս միւս իրաւունքների պարագայում, խօսւում է սոսկ զինուորական ուժի շրջանակներում, որոնցից դուրս, դարձեալ, ինչպէս միւս իրաւունքների պարագայում, հարցերի լուծման հնարաւորութիւններ չեն շռայլւում: Հեռանկարում, սակայն, լուսաւոր գիսաստղ է նկատւում. այն է՝ մի մասնաւոր դէպքում այդ իրաւունքի կիրառումը, անխուսափելիօրէն նախադէպ է ստեղծում նմանատիպ այլ հարցերի լուծման համար: Մի հարցի լուծման ժամանակ որեւեն շեշտադրւում է «նախադէպ չդարձնելու» հանգամանքը, այնքան, կարծես «դոմինոյի օրէնք»-ով, աւելի է արտօնւում դրա կիրարկումը յաջորդի պարագայում: Կոսովոյի անկախութեան ճանաչումով սկսուած ու Աբխազիայի եւ Հարաւային Օսեթիայի անկախութեան ճանաչումով շարունակւող «դոմինօների» երթը, հնարաւոր չէ դիւրութեամբ կասեցնել: Ազգերի ինքնորոշման իրաւունքի հետ կապուած «դոմինոյի օրէնքը», տրամաբանօրէն, շարժման մէջ է դնելու մի կարեւոր սկզբունք եւս, որը կարելի է բնութագրել պատմական արդարութեան հիման վրայ ձեւաւորուող իրաւաիրութեամբ: Ամէն դէպքում յիշեցնենք, որ Կովկասի եւ յարակից տարածաշրջանների կայուն խաղաղութեան ուղիները անխուսափելիօրէն եւ տրամաբանօրէն անցնում են ազգերի ազատ ինքնորոշման, արդարութեան եւ պատմական իրաւաիրութեան սկզբունքների յարգման ընդմիջից:

Հենց այս սկզբունքներից մեկնելով ենք ուզում այժմ արծարծել 2008 թուականին հայութեանը խորապէս յուզող երկու հիմնահարց.

Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորութեամբ մենք բազմիցս ասել ենք մեր խօսքը եւ պարզաբանել ՀՅԴ սկզբունքային կեցուածքը. Դաշնակցութիւնը դէմ չէ հայ-թուրքական յարաբերութիւնների նորմալացմանը, Հայաստան-Թուրքիա դիւանագիտական փոխյարաբերութիւնների ձեւաւորմանը: Ոչ միայն այսօր, այլեւ երեկ Դաշնակցութիւնը դէմ չի եղել այդ յարաբերութիւնների գոյութեանը: Յիշեցնենք, որ ճիշտ 100 տարի առաջ, ՀՅ Դաշնակցութիւնը իր մարտական, քարոզչական ու դիւանագիտական հրեանիով սատարեց օսմանեան հասարակութեանը թօթափելու համիդեան ռեժիմը: Յիշեցնում ենք այս պատմական իրողութիւնը ոչ միայն հակադաշնակցական շաբլոնիստներին, այլեւ յատկապէս բոլոր նրանց, այդ թւում նաեւ թուրքերին, ովքեր համարում են, թէ հայ-թուրքական յարաբերութիւնների կայացմանը կտրականապէս դէմ է ՀՅ Դաշնակցութիւնը:

Ահա մէկ անգամ էլ վերարծարծենք ՀՅԴ սկզբունքային կեցուածքը: Թուրքական պետութիւնն է վերջակէտ դրել հայ-թուրքական դարաւոր գոյակցութեանը եւ փոխյարաբերութիւններին՝ 19-րդ դարի կէսերից էթնիկական սիստեմատիկ զտումների, բռնագաղթերի իրականացմամբ եւ 1915-23 թթ. ցեղասպանութեան կազմակերպմամբ: Այնուհետ նոյն ինքն է ուրացման, մերժման հակահայ քաղաքականութիւն որդեգրել, ապա թշնամական շրջափակման ենթարկել վերանկախացած Հայաստանը: Հետեւաբար այժմ եթէ նա անկեղծ է՝ հայ-թուրքական յարաբերութիւնների կայացման հարցում, ա-

պա պէտք է համապատասխան պահուածք ցուցաբերի: Պատմական, բարոյական, քաղաքական եւ բազում այլ առումներով Թուրքիան իրաւունք չունի նախապայմանների լեզուով խօսելու մեր ազգի ու հանրապետութեան հետ: Մենք նախապայմաններին ենք դէմ: Այո՛, մենք միանշանակ դէմ ենք Հայոց Ցեղասպանութիւնը քննարկման առարկայ դարձնելու նախապայմանին: Այո՛, մենք դէմ ենք տարածքային սխալ եւ բռնի լուծումների նուիրականացմանն ու ճանաչմանը: Այո՛, մենք դէմ ենք արցախեան հարցում կողմնակալ պետութիւնների միջամտութեանը: Եւ թող գոնէ եկող տարում, ոչ ոք սխալ չմեկնաբանի ՀՅԴ այս սկզբունքային կեցուածքը: Մենք ի սկզբանէ մատնանշում էինք «հայ-թուրքական յարաբերութիւններ»-ի սցենարի տակ թաքցրած թուրքական դիւանագիտութեան խարդաւանքը. «*Ցեղասպանութեան հարցը միջազգային-դիւանագիտական հարթութիւնից պատմագիտական ոլորտ տեղափոխելու իրենց նկրտումով, թուրքերը փորձում են հրաշալի հնարաւորութիւն ձեռք բերել իրականացնելու առնուազն երեք ռազմավարական նպատակ,*- գրել է «Դրօշակը» 2008 թ. յուլիսի խմբագրականում,- *նախ՝ քարոզչական հիստերիայով կասեցնել զանազան պետութիւնների օրէնսդիր շրջանակներում Ցեղասպանութեանն առընչուող բանաձեւերի քննարկումը, ապա՝ ՀՀ քաղաքացիների մօտ ստեղծել անվստահութիւն եւ հակակրանք սեփական իշխանութիւնների նկատմամբ, եւ, վերջապէս՝ սեպ խրել ՀՀ արտաքին քաղաքականութեան ու սփիւռքի քաղաքական-լոբբիստական գործունէութեան միջեւ*»:

Հետագայ զարգացումները ապացուցեցին, որ մենք չէինք սխալւում Թուրքիայի ռազմավարական յեսին նպատակների գնահատման հարցում: ԱՄՆ-ի նորընտիր նախագահի եւ նրա անձնակազմի առնուազն երկու ազդեցիկ դէմքերի դրական դիրքորոշումը Հայոց Ցեղասպանութեան նկատմամբ, որքան որ հայութեան համար դրական որոշ հեռանկարներ է պարզում, նոյնքան էլ մտահոգում է թուրքերին: Հետեւաբար վերջիններս դեռ վարպետօրէն շարունակելու են խաղալ սեփական խաղը եւ դեռ մոգոնել նորերը:

2008 թուականին բազում սեւ ամպեր կուտակուեցին ու անցան Արցախի գլխով, երբ մենք ազգովին տօնում էինք Արցախեան ազգային ազատագրական շարժման 20-ամեակը: Ադրբեջանի ռազմապաշտական ժեստերին գումարուեցին նաեւ բանակցային գործընթացները միջազգային այլեւայլ հարթութիւններ փոխադրելու մարտավարական հնարքները: Հայաստանի յեսընտրական տագնապները պատեհ հնարաւորութիւն ընձեռեցին ադրբեջանցիներին դիւանագիտական «բաց շղթայով»՝ ՄԱԿ-ով, «հայ-թուրքական յարաբերութիւններ»-ով գրոհելու հայկական դիւանագիտութեան դիրքերը: Վրաց-օսական պատերազմը մի փոքր սաստեց նրանց, բայց Իլհամ Ալիեւի վերընտրութեամբ նորից սաստկացաւ նրանց գրոհը: Մայնդորֆեան եռակողմ բանակցութիւններով դարձեալ սանձուեց ադրբեջանական կատաղի քաղաքականութիւնը: Բաւուն դեռ երկար ժամանակ շարունակելու է արձագանքել, զանազան կողմերից հնչեցուած ոգեւորող ու յուսախաբող ակորդներին:

Ադրբեջանական քաղաքականութեան այս վայրիվերումներին ու զիգզագ քայլերին ի տես, առաւել ծանրակշիռ շարժումներով հանդէս եկաւ հայկական կողմը: Այս առումով դրական երեւոյթ պէտք է համարել ՀՀ նախագահի կողմից քաղաքական ուժերին ուղղակի իրազեկման նախաձեռնութիւնը: Նոյնպէս դրական կարելի է համարել կոչ ընդդիմութեան կատարած քայլը՝ միտինգների դադարեցումը: Այս դրական երեւոյթների կողքին, սակայն, թեժ մնաց փոխադարձ ամբաստանութիւնների ու պիտակաւորումների հնոցը: Մենք Արցախեան հիմնահարցի ներկայիս հանգրուանի հետ կապուած երիցս պարզաբանել ենք ՀՅԴ սկզբունքային կեցուածքը եւ մեկնաբանել նաեւ մեր մարտավարական մօտեցումները բանակցային գործընթացի վերաբերեալ: Սակայն 2008 թուականին էլ դեռ եղան մարդիկ, ովքեր շփոթելով ռազմավարութիւնն ու մարտավարութիւնը, նպատակն ու միջոցը, մեզ, յաճախ ամբոխավարական խանդավառութեամբ, հարցեր ուղղեցին՝ վերջապէս ի՞նչ է ՀՅԴ դիրքորոշումը ազատագրուած տարածքների նկատմամբ: Իրք մտադիր չենք այստեղ տրամաբանել կամ տրամաբանութեան դասեր տալ քաղաքական այդ գործիչներին: Յիշեցնենք միայն մի պարզ ճշմարտութիւն, որ ՀՅԴ-ն եւ առհասարակ միւս ազգային ուժերը, որոնց մարտիկների արեամբ են շաղախուած մեր ազատագրուած տարածքները, այդ տարածքները պահելու, պահպանելու եւ իրականօրէն հայութեանը ամրագրելու համար ընդունակ են կրկին զոհաբերելու ամենաթանկը: Այս կապակցութեամբ ուզում ենք մի կարեւոր սկզբունք մէջ բերել ՀՅԴ 30-րդ Ընդհանուր Ժողովի կողմից ընդունուած բանաձեւերից. «*ՀՅ Դաշնակցութիւնը Արցախի Հանրապետութեան փաստացի սահմանները ինչպէս նաեւ Հիւսիսային Արցախի գրաւեալ շրջանները համարում է Արցախի Հանրապե-*

տության անբաժանելի մասը եւ ամէն ջանք պէտք է գործադրի՝ այս ընկալումը համայն հայութեան եւ Հայկական պետության սեփականութիւնը դարձնելու համար» (Քաղուածք ՀՅԴ 30-րդ Ընդհանուր Ժողովի բանաձեւերից, գումարուած 2008 թ. մայիսի 21-26, Ծաղկաձոր): Ի դէպ, նշենք, որ ՀՅԴ այս սկզբունքային կեցուածքը ոչ միայն բխում է հայ ժողովրդի ազգային շահերից, այլեւ, ըստ էութեան, համահունչ է ԼՂՀ Սահմանադրութեան 142-րդ յօդուածի ոգուն, համաձայն որի. «*Մինչեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան պետական սարածքի ամբողջականութեան վերականգնումը եւ սահմանների ճշգրտումը հանրային իշխանութիւնն իրականացնում է այն սարածքում, որը փաստացի գտնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան իրաւազորութեան ներքոյ*» (ԼՂՀ Սահմանադրութիւն, 2006 թ.):

2008 թուականը նաեւ 20-ամեակն էր փոքր, բայց հոգսերով լի, երկրի ու ժողովրդի համազգային աղետի՝ Հիւսիսային Հայաստանի երկրաշարժի: Աղետ, որ խոցուած սրտերով ու արտասուաթոր աչքերով հայ մարդկանց կայծակնային արագութեամբ համախմբեց աշխարհի չորս կողմերում: Թւում է, թէ մեր ազգը ընդունակ է միաւորուելու միմիայն արհաւիրքի պահին: Դա մի թիւր զգացում է, որ առաւելաբար ներշնչում ենք ինքներս մեզ: Դրսից դիտարկողն այլ կերպ է պատկերացնում: Նոյնիսկ հայութեան նկատմամբ թշնամական զգացմունքներ տածողները, տարօրինակ յամառութեամբ, երբեմն էլ գերչափազանցուած աղացոյցներով, պնդում են հակառակը՝ հայերը միշտ միասնական են: Դրսից կազմուած պատկերացումը, զարմանալիօրէն, աւելի մօտ է իրականութեանը: Փորձէք գտնել Թուրքիայի ազգայնամոլ կամ թէկուզ դեմոկրատ մի պատմաբանի կամ քաղաքական գործչի, որ ինքն իրեն թոյլ տար ակնարկել՝ Հայոց Ցեղասպանութեան հարցի շուրջ հայ իրականութեան մէջ իրարամերժ տեսակէտների առկայութեան մասին: Վստահաբար չէք գտնի, բայց դրա փոխարէն կը գտնէք թուրք մտաւորականների ազդեցիկ մի շրջանակ, որն ընդունում է պատմական անուրանալի իրողութիւնը: Մեր ազգի համախմբուածութիւնը, իհարկէ, ինչպէս նաեւ միւս բոլոր կայացած ազգերինը, դրսեւորւում է ազգային գերխնդիրների շուրջ՝ դրանք լինեն աղետալի կամ ոչ: Ընդամէնը պէտք է միւս ազգերի նման հաւաքել այդ հրաշագործ ուժին: Ու կը տեսնենք, թէ ինչպէս փոքր ազգի վիթխարի աղետի սգահանդէսային սիմֆոնիաների մեղեդիները կը տարրալուծուեն՝ խառնուելով այդ նոյն փոքր ազգի շախմատի, բռնցքամարտի ու ծանրամարտի չեմպիոն զաւակների մեծարման ծափողջոյններին: Չեմպիոն զաւակներ, հերոսներ, որոնք աղացուցեցին, որ բարձր ինտելեկտով ու բազկի ուժով կարելի է ռեկորդային բեռներ բարձրացնել ու յաղթանակել, մեզ պետական տարածքով ու ազգաբնակչութեան թուաքանակով մի քանի տասնեակ անգամներ գերազանցող բազմաթիւ ազգերի զարմացած հայացքների ներքոյ:

Ահա այս նոյն հոգեբանութեամբ էլ պէտք է ընդառաջ գնալ 2008 թ. ամենայատկանշական տագնապին՝ համաշխարհային ֆինանսական ճգնաժամին: Այդ ճգնաժամը յաղթահարելու համար անհրաժեշտ է բարեփոխել Հայաստանի սոցիալ-տնտեսական համակարգը. «*Բարեփոխել Հայաստանի տնտեսական համակարգը,*- մէջբերում ենք ՀՅԴ 30-րդ Ընդհանուր Ժողովի բանաձեւերից,- *ընդ որում՝ առաջնահերթ նկատել պետական յատուկ ծրագրերով աղքատութեան հաղթահարումը հասարակութեան մէջ արժանապատիւ ապրելու հնարաւորութիւնը, սպառողական տնտեսութեան, կառուցվածքի դէմ պայքարը, հաւասար մրցակցային դաշտի ապահովումը, արդիւնաբերական քաղաքականութեան իրականացումը, արտահանման խրախուսումը եւ բազմաճիւղ արտադրութեան արդիւնաւէտ կառուցուածքի ձեւաւորումը*»: Տուեալ բարեփոխման համար, պէտք է գտնել դրա ամենայուսալի ուղիները: Այս բարեփոխումները, եթէ պէտք է լինեն յօգուտ աշխատանքի դաշտի, ապա այդ բարեփոխումներն իրագործողները պէտք է օժտուած լինեն համապատասխան գաղափարախօսութեամբ: Բուրժուական, նէոլիբերալական գաղափարների կրողները, ըստ էութեան, ի վիճակի չեն իրականացնելու սոցիալական արդարութեանը միտուած բարեփոխումներ: Մեր հասարակութիւնը, այսուհետ, այս հաւատամքով պէտք է հանդէս գայ աղագայում: Հետաքրքիր զուգահեռ կարելի է անցկացնել այսօրուայ եւ 100 տարի առաջուայ իրողութիւնների միջեւ. «*1908 թուականը միանգամ եւս,*- գրում է «Դրօշակն» իր 1908 թ. նոյեմբ.-դեկտեմբերի համարում,- *աւելի ուժգին քան երբեւիցէ, շեշտեց տխուր, ճակատագրական փաստը - հայ աշխատաւոր ժողովրդի արտաքնելիկ մենակութիւնը՝ մի անգամ եւս այդ ժողովուրդն զգաց, որ իր ու «ազգի» կուշտ, շահամոլ կաստայի միջեւ անդունդ է ձգուած եւ որ նա ինքը պէտք է հոգայ իր ծով ցաւերը, պէտք է հարթէ իր ճանապարհը անհնարին խոչընդոտների վրայից, յենուած իր սեփական ուժերի վրայ, իր գաղափարական տարրերի անձնազոհ գործակցութեան վրայ*»:

Նոյեմբերի 29-ից դեկտեմբերի 1-ը Լիբանանի մայրաքաղաք Բէյրութում տեղի ունեցաւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի հերթական լիագումար նիստը:

Օրակարգում նախորդ լիագումարների որոշում-առաջադրանքներից բխող ծրագրերի հաստատումն էր, արդէն կատարուած աշխատանքների գնահատումը, կազմակերպական, քարոզչական անելիքների ճշգրտումը, Հայաստանի ներքին ու արտաքին մարտահրաւէրների քննարկումը:

Լիագումարը առանձնակի ուշադրութեամբ անդրադարձաւ Հարաւային Կովկասում ստեղծուած նոր կացութեանը, պետականութեանն աջակցելու կուսակցութեան, ուղեկից կառոյցների, Հայ Դատի գրասենեակների անելիքներին, Արցախի հիմնախնդրի, հայ-թուրք յարաբերութիւնների վերջին զարգացումներին, հայկական ցեղասպանութեան միջազգային ճանաչման ուղղութեամբ կատարուելիք հրատապ քայլերին:

Կրկին շեշտուեց, որ Արցախի հիմնահարցի վերջնական կարգաւորումը հնարաւոր է միայն խաղաղ-բանակցային գործընթացով, որտեղ ԼՂՀ-ն հանդէս կը գայ իբրեւ բանակցային կողմ:

Նկատի ունենալով, որ մոսկովեան հռչակագրի ստորագրումից յետոյ էլ Ադրբեջանը չի հրաժարւում ռազմաշունչ հռետորիկայից՝ չափազանց կարեւոր է, որ հարցը շարունակաբար մնայ համազգային օրակարգում՝ իբրեւ Հայաստանի ու հայութեան լինելիութեանն ու անվտանգութեանը առնչուող գերխնդիր: Բանակցային գործընթացում մեզ համար հիմք պէտք է ծառայի Արցախի ժողովրդի ինքնորոշման փաստը, որը տեղի է ունեցել երկու առիթներով, 1991 թ. անկախութեան եւ 2006 թ. ԼՂՀ Սահմանադրութեան ընդունման հանրաքուէներով: Փոխզիջումները կարող են լինել միմիայն համարժէք, հաւասարաչափ, միաժամանակեայ եւ տեղադրուել փաթեթային ամբողջական լուծման համակարգում:

Կրկին հաստատելով, որ Հայաստանն ու Թուրքիան՝ իբրեւ հարեւան պետութիւններ, պէտք է շարունակեն յարաբերութիւնների բնականոնացման ջանքերը, միաժամանակ ընդգծուեց, որ Թուրքիայի կողմից մինչեւ այժմ որեւէ դրական քայլ չի արուել: Ընդդիմակառակը՝ փորձ է արւում առկայ շփումները օգտագործել իբրեւ ցեղասպանութեան ճանաչման գործընթացը կասեցնելու միջոց, իսկ երկու պետութիւնների յարաբերութիւնները պայմանաւորել երրորդ երկրի՝ Ադրբեջանի հետ Հայաստանի յարաբերութիւններով:

Այս համատեքստում գնահատուեց մեր երկրի բարձրագոյն ղեկավարութեան միակամութիւնը առ այն, որ Հայաստանի արտաքին քաղաքականութեան ռազմավարական ուղղութիւններից մէկը Հայոց Ցեղասպանութեան համընդհանուր, այդ թւում՝ Թուրքիայի կողմից ճանաչումն ու դատապարտումն է: Միւս կողմից՝ շեշտուեց, որ Հայաստան-Թուրքիա փոխյարաբերութիւնների կարգաւորման այսրոպէական կարեւորութիւնը հայոց պետականութեան կողմից չպէտք է գերագնահատուի սերունդների իրաւունքներից:

Քննարկուող բոլոր հարցերի վերաբերեալ ընդունուեցին համապատասխան որոշումներ՝ միշտ մեկնակէտ ունենալով կուսակցութեան քաղաքական ուղեգծի այն հիմնարար դրոյթը, ըստ որի՝ ՀՅ Դաշնակցութեան գերխնդիրը Հայաստանի Հանրապետութեան անկախութեան, անվտանգութեան եւ առաւելագոյն ինքնուրոյնութեան ապահովումն է:

ՀՅԴ Մամուլի դիւան
2 Դեկտեմբերի 2008 թ

Լևոն Շիրինյան

«Ամեն ինչ պատրաստ է, բախտի նախասահմանումը ցույց է տալիս մեզ ճանապարհը... մեզ ղեկավարում է Աստված... Ամերիկային վճռված է ցույց տալ ճշմարիտ ուղին»:

Վուդրո ՎԻԼՍՈՆ

ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ԱՆԿՈՒՄԸ

(Վուդրո Վիլսոնը և արդարացի աշխարհակարգի հաստատման ամերիկյան խոյանքը)

(Շարունակություն)

Վիլսոնը ձախողվեց:

Գլխավորը նրա ձախողման մեջ, նկատենք, այդուհանդերձ, եվրոպական գլխավոր դաշնակից երկրների ռազմական գերազանցության մեջ չէր, և ոչ էլ նույնիսկ նրանց բազմամիլիոն բանակների հզորության: Խարդավանքը (ինտրիգա) «եվրոպական համանվագի» գործողության մեխանիզմի մեջ էր: Վիլսոնը և Լլոյդ Ջորջը 1918 թվականին հայտարարեցին. «ցարիզմի կործանումը արմատապես փոխեց արևելյան խնդիրը՝ «գլանակը» կանգնեց, պայթեց պատերազմից ու հեղափոխությունից... Ռուսական վտանգը վերացավ: Առաջին հետևությունը՝ Թուրքիան այլևս պետք չէ, Թուրքիան իր հերթին ենթակա է ոչնչացման» (Ե. Ա. Աղամով): Չքացավ «եվրոպական համանվագը»: 1919 թվականի հունվարի 30-ին եվրոպական տերությունները հանդիսավոր կերպով հայտարարեցին. Օսմանյան կայսրությունը դադարեցրեց իր գոյությունը: Իսկ Վիլսոնն ազդարարեց. «Անցյալին վերադարձ չկա»: Այդպես, սակայն, թվում էր միայն:

Մինչ Վիլսոնը ուժերի բարդ հարաբերակցության մեջ ուրվագծում էր «կայուն համաշխարհային հավասարակշռություն», կարդինալ Ռիշելյեի հայրենակից Կլեմանսոն մարտնչում էր «ուժերի նոր հաշվեկշռի» համար, մինչ Վիլսոնը պայքարում էր հանուն «միջազգայնորեն կազմակերպված աշխարհի», «իրավունքին ընդհանուր հավատարմության», Կլեմանսոն «իր առջև տեսնում էր միայն Ֆրանսիային», որի «նկատմամբ տածում էր նույն զգացմունքները, ինչ որ Պերիկլեսը Աթենքի. այն ամենը, ինչ որ գին ունի, ամփոփված է նրա մեջ, մնացածը ոչինչ չարժե...», որ «ուժի վրա հիմնված քաղաքականությունը անխուսափելի է» (Ջ. Մ. Քեյնս): Փարիզի խաղաղության վեհաժողովում, գրում է քաջածանոթ Ջոն Մ. Քեյնսը, «համաշխարհային հարաբերությունների ապագա կառուցվածքի վերաբերյալ միմյանց միջև պայքարում էին երկու հակադիր պլաններ՝ Վիլսոնի *Տասնչորս կետերը* և Կլեմանսոյի *Կարթագենյան խաղաղությունը:* Սակայն, միայն նրանցից մեկն է, որ իրականացման իրավունքն ուներ...» (ընդգծումը իմն է,- Լ. Շ.) (Кейнс Дм. М., Экономические последствия Версальского мирного договора. Пер. с англ. 2-е изд. М.-Л., 1924, էջ 25): Այն իր դաժանությամբ իր արտացոլումն էր գտնում թուրքական հարցի շուրջ ընթացող համաշխարհային դավերի շրջանակում՝ «վերսալյան գործընթացի» գլխավոր խարդավանքներում: Եվ ժամանակի

ընթացքում սկսեց գերակշռել «Կլեմանսոյի *Կարթագենյան խաղաղությունը*». Եվրոպան հակվեց «երջանիկ անցյալին», շրջվեց դեպի անցյալի «մեծ տիպարները», դեպի «եվրոպական համանվագ», որի ծնունդն էր համաշխարհային առաջին սպանդը և բոլոր ժամանակների Մեծ ոճիրը՝ Հայոց ցեղասպանությունը... Իսկ Թուրքիան առաջիկայում Արևմուտքի համար ձեռք էր բերելու ռազմավարական ավանդական նշանակությունը: Ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը դառնում էր *հմուտ բանաձև սեփական շահի տեսանկյունից ուժերի հավասարակշռությունը վերադասավորելու համար...*

Մինչ նախագահի հայրենիքում նրան սպասում էր դաժան և անզիջում պայքարը խաղաղության դաշնագրի վավերացման, «ազգերի համաշխարհային խորհրդարանի»՝ Ազգերի դաշնակցության ու Հայաստանի հոգատարության համար, Փարիզում իր վճռին էր սպասում «թուրքական թնջուկը»: Աշխարհի հզորները պետք է լուծեին՝ ա) Կ.Պոլսի և նեղուցների, բ) Օսմանյան կայսրության փոքրասիական տիրույթների, մասնավորապես, արևածոր Հայաստանի, գ) արաբական տարածքների՝ Պաղեստին, Սիրիա, Միջագետք, ճակատագրերը: Անգլիան ու Ֆրանսիան, անտեսելով ԱՄՆ-ին, արագացրին իրենց քայլերը Թուրքիան բաժանելու ուղղությամբ: Դեկտեմբերի 11-ին Լոնդոնում գումարվեց անգլո-ֆրանսիական համաժողովը, որտեղ քննվեցին մերձավորարևելյան նավթի, Կ. Պոլսի համատեղ գրավման, Անատոլիայում ազդեցության ոլորտների ձեռք բերման հարցերը: Իսկ 1920 թվականի փետրվարին, խաղաղության վեհաժողովի պաշտոնական փակումից (1920 թ. հունվարի 21) անմիջապես հետո, Լոնդոնում, տեղի ունեցավ անգլո-ֆրանս-իտալական համաժողովը (Լլոյդ Ջորջ, Միլերան, Նիտտի): ԱՄՆ-ից մասնակցում էր միայն դիտորդ: Այս անգամ թուրքական հարցի վերաբերյալ ընդունվեցին կոնկրետ որոշումներ, որոնք այնուհետև ընկան Սան-Ռեմոյի (1920 թ. ապրիլի 18-26) համաձայնության և Սևրի (1920 թ. օգոստոսի 10) դաշնագրի հիմքում: Այստեղ արդեն պաշտոնապես մերժվեցին Թուրքիային վերաբերող ամերիկյան առաջարկները, բացառությամբ Հայաստանի հոգատարության: Նախատեսվում էր, առանց սահմանները նշելու, Հայաստանը ստեղծել Էրզրումի (Կարին), Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի (Բաղեշ) նահանգներում դեպի Սև ծով ելքով, որն իր չափերով արդեն շատ էր հեռու «Մեծ Հայաստանի» («Larger Armenia») վիլսոնյան նախագծից: Կիլիկիան անցնում էր Ֆրանսիայի «ազդեցության գոտի»:

Աշխարհում ռազմավարական հաշվեկշռի արմատական փոփոխության պայմաններում ԱՄՆ-ի համար «նախատեսվում» էր, մասնավորապես, Հայաստանի հոգատարության և նրա սահմանների որոշման հարցը: Նկատենք, որ ԱՄՆ-ի, որպես *հոգապարակիր* երկրի, վերաբերյալ առաջին հրապարակային խոսքը եղել էր դեռևս 1919 թվականի մարտի 7-ին, երբ Գերմանիայի զինաթափման հարցի քննարկման ընթացքում շոշափվել էր նաև Թուրքիայի հարցը: Լլոյդ Ջորջը Կլեմանսոյի ներկայությամբ նախագահ Վիլսոնի «անպաշտոն խորհրդական» գլխադասեր Հաուզին հարց էր տվել. կարո՞ղ է ԱՄՆ-ը իր վրա վերցնել Օսմանյան կայսրության, հատկապես Կ. Պոլսի և Հայաստանի հոգատարությունը: Հաուզը պատասխանել էր, որ ԱՄՆ-ը պատրաստ է իր վրա վերցնել Կ. Պոլսի և Հայաստանի հոգատարությունը, որ ԱՄՆ-ը կարող է նույնիսկ իրականացնել Անատոլիայի «ընդհանուր հսկողությունը» (Lloyd George D., The Truth About the Peace Treaties, էջ 288):

Նախագահ Վիլսոնն իր հերթին, փետրվարի 26-ին, արտաքին գործերի սենատական հանձնաժողովի հետ կոնֆերանսում, երբ քննվում էր նաև Հայաստանի հոգատարության հարցը (Logan R. W., The Senate and the Versailles Mandate System, N. Y., 1945, էջ 54), Սպիտակ տանը հայտարարել էր. եթե ԱՄՆ-ը երբևէ հանձն առնի որևէ հոգատարություն Ազգերի դաշնակցությունից, ապա դա կլինի առաջին հերթին Հայաստանը (America as Mandatory for Armenia, N. Y., 1919, էջ 26): Եվ ահա, Սան-Ռեմոյում ընդունված ռազմավարության համաձայն, թուրքական պայմանագրի տեքստ պետք է մտցվեր հատուկ մի կետ, որը դաշնագիրը ստորագրած բոլոր կողմերին պարտավորեցնում էր կանխավ ընդունել այն սահմանները, որոնք պետք է «գծագրվեին» նախագահի կողմից օսմանյան նախկին նահանգների սահմաններում: Եվ դեռևս հոգատարության հարցը չլուծված, նախագահը, որպես յու-

ռատեսակ պատասխան Դաշնակցիների գերագույն խորհրդի առաջարկի, ստեղծել էր հատուկ կոմիտե՝ գծելու համար ապագա («Սևրյան») Հայաստանի սահմանները: Որոշումը պետք է կայացվեր «բանականության սահմաններում»՝ հիմնված *ազգագրական* (էթնիկական), *աշխարհագրական, տնտեսական, ռազմավարական* և այլ նկատառումների վրա2: «Կոմիտեի այդ աշխատանքի մեջ էլ ստեղծվել է «Վիլսոնյան Հայաստանի» ուրվագիծը» (Ованнисян Р., США и Армения: мандат и границы, 1920 г., էջ 119):

...1920 թ. ապրիլի 25-ին Սան-Ռեմոյի խորհրդաժողովը որոշում է դիմել նախագահ Վիլսոնին ԱՄՆ-ի կողմից Հայաստանի հոգատարությունը ստանձնելու առաջարկով (Batsell W. R., The United States and the System of Mandates. N. Y., 1925, էջ 271), իսկ ձախողման դեպքում՝ հանդես գալ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանազատման իրավարար (արբիտր) հիշյալ նահանգներում: Հայաստանի կառավարությունը ևս ԱՄՆ հոգատարության հաստատման ուղղությամբ լայնածավալ աշխատանք էր տանում: Ամերիկյան կողմի հետ նա Փարիզում պատրաստել էր ԱՄՆ-ՀՀ համաձայնագրի նախագիծ (1919 թ. հուլիսի 18)՝ հոգատարության հարցի դրական լուծման դեպքում (նախագիծը տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, N 2, էջ 32-34): 1919 թվականի փետրվարի 4-ին Եվրոպա և ԱՄՆ էր գործուղվել, նույն առաքելությամբ, ՀՀ առաջին (նախկին) վարչապետ Հովհաննես Քաջազնունին:

1920 թ. մայիսի 17-ին Վիլսոնը Փարիզում ԱՄՆ-ի դեսպանի միջոցով Անտանտայի Գերագույն խորհրդին հայտնում է իր համաձայնությունը՝ լինել ապագա Հայաստանի սահմանների իրավարարը (միջնորդ դատավոր.- Լ. Շ.) («Foreign relations of the U. S. 1920», Vol. III, էջ 783, 793), և մայիսի 24-ին դիմում է ԱՄՆ-ի Կոնգրեսին ուղերձով՝ Հայաստանի հոգատարությունը ընդունելու առաջարկով (Logan R. W., The Senate and the Versailles Mandate System, էջ 97): Վիլսոնը նկատելով, որ Կոնգրեսի մեծամասնությունը հանդես է գալիս Հայաստանի հոգատարության դեմ, այն հիմնավորումով, թե ԱՄՆ-ը Հայաստանում չի կարող պահել 100 հազարանոց խոշոր բանակ, ինչպես գտնում էր Հարբորդի առաքելությունը, հարցնում է ռազմական փորձագիտական կարծիք՝ հոգատարությունը իրականացնելու մասին: Նոր հաշվարկով Հայաստանում ԱՄՆ-ի հոգատարությունը իրականացնելու համար բավարար է դիտվում 27 հազար մարդը, պայմանով, որ երեք տարի հետո այն հասցվի մինչև 10 հազար մարդու: Սակայն, այդ քայլը ևս հաջողություն չի բերում նախագահին:

Հայաստան փորձաքարը. Վիլսոնը՝ իրավարար

ԱՄՆ-ի Սենատի արտաքին հարաբերությունների կոմիտեն 1920 թվականի մայիսի 27-ին պատրաստում է մի բանաձև, որով 4 դեմ, 11 կողմ ձայնով Կոնգրեսի երկու պալատներին էլ հանձնարարում է Հայաստանի հոգատարությունն ստանձնելու իրավունք գործադիր իշխանությանը չտալ: Որպես կատարում հանձնարարականի, Սենատը երկար վիճաբանությունից հետո, 23 դեմ, 52 կողմ ձայնով, հուլիսի 1-ին ընդունում է հանձնախմբի նախագահ (հանրապետական) Լաջի (Henry Cabot Lodge) բանաձևը, որը «հարգանքով կհրաժարվի նախագահին տալ իրավասություն՝ ընդունելու Հայաստանի հոգատարությունը»:

ԱՄՆ-ում այսպես տապալվում է Վուդրո Վիլսոնի «Հայաստանի հոգատարության» ռազմավարությունը: Այստեղ ևս, ի վերջո, հաղթում է «Կլեմանսոյի կարթագենյան խաղաղությունը»: Արևմուտքը անկասելիորեն մղվում է ուժերի հավասարակշռության նոր հարթություն: Հայ զինվորականության կողմից Կարսի ամրոցը «հաջողությամբ» Կարաբեքիրին հանձնելուց հետո անգլիական «Daily Herald»-ը 1920 թվականի նոյեմբերի 13-ի համարում գրում է. «Սկզբնապես պլանը ամփոփված էր Վրաստանն ու Հայաստանը Բաքուն գրավելու համար օգտագործելու մեջ: Սակայն Քեմալ փաշան իրեն ցույց տվեց ավելի ուժեղ, քան դա սպասում էին: Թուրքական բանակը մխրճվեց Հայաստանի սիրտը: *Դրանով վերջանում է հին քաղաքականությունը* (ընդգծումը իմն է.- Լ. Շ.): Պարզ է, որ թույլ Հայաստանը չի կարող Բաքվից դուրս մղել կարմիրներին: Ո՞վ կանի դա: Ինչո՞ւ ոչ Քեմալը: Պետք է ճանաչել Քեմալին, նրան տալ փոխհատուցում... և նա կհամաձայնի վռնդել կարմիրներին Բաքվից» (Տե՛ս Шилькова В. И.,

Империалистическая политика США в отношении Турции. 1914-1920 гг., М., 1960, էջ 131): Անշուշտ, Քեմալը կարմիրներին Բաքվից չվռնդեց և չէր էլ պատրաստվում վռնդել: Քեմալն էր 1920 թվականի ապրիլի 26-ին Լենինին հղած իր նամակով** առաջարկում իրար միջև բաժանել Հայաստանի Հանրապետությունը (կարդա՝ Արևելյան Հայաստանը), փոխարենը նվիրաբերելով Բաքուն: Իսկ Արևմուտքը Սևրին դավաճանելուց հետո և լքելով Հայաստանը, ըստ էության, կացնահարեց արևմտյան քաղաքակրթության ԱՌԱՋԱԴԻՐՔԻ հիմքերը տեղում, բացելով վերջինիս *անընդհատ* (պերմանենտ) նահանջի ճանապարհը Առաջավոր Ասիայում և Միջին Արևելքում, ստեղծելով տարածաշրջանում քաղաքակրթությունների անհավասարակշռություն ու նրանց հավանական բախման անկանխատեսելի նախադեպ, հեռանկարի մեջ ցանելով ռազմավարական աղետի թունավոր սերմեր, ինչի մասին վերջին շրջանում հիշեցնում է պրոֆ. Սամուել Հանթինգթոնը (Samuel P. Huntington): Այս առումով, սակայն, պարզվում է, Հանթինգթոնը առաջինը չէ: Հայաստանի հոգատարության հարցի քննարկման ժամանակ, 1920 թ. հունիսի 1-ին Արկանզասից սենատոր Ջոզեֆ Ռոբինսոնը ասում էր. եթե Կոնգրեսը մերժի նախագահ Վիլսոնի առաջարկը, ապա «*քրիստոնեությունը* (կարդա՝ արևմտյան քաղաքակրթությունը.- Լ. Շ.) *իր արևելյան ճակատում կսպանա ջախջախիչ հարված*»:

Թերևս, այս նկատառումով էր, որ Թոմաս Վուդրո Վիլսոնը, առաքյալի պայծառատեսությամբ, հավատալով Հայաստանի լուսե ապագային, Հայաստան–Միացյալ Նահանգներ անխզելի բարեկամությանը, միջազգային իրավունքի օրենսդրի արդարամտությամբ ու վստահ ամերիկյան ժողովրդի ժողովրդավար *կամքին*, կատարեց հանձն առած *իրավարարի* (arbitrator) պարտականությունը՝ սահմանափակված (այդուհանդերձ՝ հոգուտ Թուրքիայի) Վան, Բաղեշ (Բիթլիս), Կարին (Էրզրում), Տրապիզոն նահանգներով: Տեղին է նշել, որ իրավարարության բնույթով իրավարարի որոշումը կողմերն ընդունում են «ապրիորի, այն պարտադիր է նրանց համար և վավերացման (ռատիֆիկացիա) կարիքը չունի» (Յու. Բարսեղով): Սևրի դաշնագրի ստորագրումը՝ կատարված աշխարհի ազգաբնակչության 66 %-ը ներկայացնող 14 երկրների կողմից (հանգամանորեն տե՛ս Սահակյան Տ. Ղ., Վուդրո Վիլսոն. մարդը և քաղաքագետը, Եր., 2006, էջ 63), ստեղծել էր միջազգային բազմակողմանի պարտավորություն՝ ընդունել իրավարարության պայմանները: Ընդսմին, այդ կարգի պարտավորությունների վերանայումը «հնարավոր է միայն բոլոր կողմերի և հատկապես այն կողմի, որի օգտին կայացվել է իրավարարական որոշումը, համաձայնությամբ» (Յու. Բարսեղով), ինչը, բնականաբար, Սևրի դաշնագիրը ստորագրելուց հետո, մասնավորապես ՀՀ կողմից, տեղի չի ունեցել:

Վիլսոնը, մշակված ընթացակարգի համաձայն, իրավարարության առաջարկն ստանալուց յոթ ամիս հետո, իսկ հոշոտված Հայաստանի բռնի խորհրդայնացումից յոթ օր առաջ, 1920 թվականի նոյեմբերի 22-ին կայացրեց ու հռչակեց իրավարարական իր վճիռը (Տե՛ս «Papers Relating to the Foreign Relations of the U. S. The Paris Peace Conference 1919», Vol. III, էջ 790-804), որը, ինչպես ամեն մի իրավարարական վճիռ, ծնել ու ծնում է «որոշակի իրավական հետևանքներ նրա մասնակիցների համար»: Գլխավոր դաշնակից երկրները, երբ դիմում էին իրավարարության, տվյալ դեպքում ևս, անշուշտ, համաձայն էին, որ «իրավարարի կարգադրությունները, որքանով այն վերաբերում է իրենց, լինելու են վերջնական և, համապատասխանաբար, պայմանավորվեցին հարգել այդ իրավաձևավորող միջազգային համաձայնությունը» (Յու. Բարսեղով): Ընդսմին, նախագահ Վիլսոնի բացատրությամբ, իրավարարական վճիռը կայացվել է ամենահավաստի տեղեկատվության (information) և «արդարության բարձրագույն շահերի գիտակցումով» («Papers Relating to the Foreign Relations of the U. S. The Paris Peace Conference», էջ 796):

Վիլսոնի վճիռը պետք է հրապարակվեր դեկտեմբերի 17-ին, սակայն անգլիական կողմը, որը որոշ տեղեկություններով քեմալականների հետ շփման ուղիներ էր որոնում դեռևս 1919 թվականի սեպտեմբերից (Տե՛ս Бюллетень НКИД, 1921, N 104, էջ 28) և նրանց հետ գործարքի մեջ էր 1920 թվականի աշնանը, քաղաքական ճնշում էր գործադրում ամերիկյան կողմի վրա վճռի հրապարակումը կանխելու համար, իբրև թե մինչև

«որոշ նկատառումների» ներկայացում: Անգլիացիներին, սակայն, հաջողվեց միայն վճռի հրապարակումը որոշ ժամանակով հետաձգել: ԱՄՆ-ի 28-րդ (դեմոկրատ) նախագահ Թոմաս Վուդրո Վիլսոնի իրավարարական վճիռը հրապարակվեց 1921 թվականի հունվարի 22-ին Վաշինգտոնում, դրանով իսկ ընդգծելով վճռի *անշրջելիությունն* ու *անբեկանելիությունը*** (Հայաստանի Հանրապետությունն արդեն բռնազավթվել ու խորհրդայնացվել էր), հայ ժողովրդի՝ իր հայրենիքի հանդեպ, միջազգայնորեն հռչակված սահմաններում, իրավունքի *անժամանցելիությունն* ու *վերանցականությունը* transcendental:

Այսպիսով, ԱՄՆ-ի 28-րդ նախագահ ԹՈՄԱՍ ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԸ (դեմոկրատ, կալվինիստ), 20-րդ դարի բարոյապես անբասիր ԱՇԽԱՐՀԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ, անկաշառ և նյութապես անշահախնդիր բարեփոխիչը, խորունկ ու խստապահանջ կրոնասերը, գաղափարապաշտն ու քաղաքական իրապաշտը՝ պայծառ մտքով, կրքոտ, երբեմն անկոտրում մարտիկն այն բանի, ինչը համարում էր բարի գործ (Կլաուս Շվաբե), մեկնելով անվտանգ աշխարհակարգի ու քաղաքակրթության արմատական ու հեռագնա շահերից և իրավագիտակցության բարձր սկզբունքներից, անկողնում գամված վիճակում էլ (1919 թվականի հոկտեմբերի 2-ին ուղեղի արյունազեղման հետևանքով անդամալուծվել էր նախագահի աջ կողմը) մնաց հարազատ ՀԱՅԱՍՏԱՆԻ իր տեսլականին, թերևս, որպես *միակ և իրական հուշարձանը* Հայաստանի կորուստների ու տառապանքների, հայ ժողովրդի՝ քաղաքակրթությանը մատուցած հազարամյա անգնահատելի ծառայությունների, Դաշնակիցների հաղթասեղանին բերած նշմարելի մարտական նպաստի…

Հ. Գ. - Վիլսոնը կռահում էր պատմական հեռանկարը:

Կենսագիրը գրում է. թողնելով Սպիտակ տունը, նա հաճախ, նստած բուխարու դիմաց՝ Սուրբ Գիրքը ձեռքին, հիշում էր Փարիզը, որտեղ Կլեմանսոն ու Լլոյդ Ջորջը շողոքորթելով թախանձում էին իրեն: Մահվանից ոչ շատ առաջ, նախկին նախագահն, ի խորոց սրտի, ասում էր, որ ինքը ցանկանում է ապրել մինչև այն պահը, երբ Գերմանիան վերջնականապես կջախջախի Ֆրանսիային (Տե՛ս Lawrence D., The True Story of Woodrow Wilson. N.Y., 1924, էջ 354):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* Վիլսոն Վուդրո - ԱՄՆ-ի 28-րդ նախագահ (1913-1921), Ազգերի լիգայի ոգեկոչողն ու հոգևոր հայրը, աղաղության նոբելյան մրցանակի դափնեկիր (1919 թ.): XIX դարի վերջի – XX դարի սկզբների ամերիկյան ամենաազդեցիկ քաղաքագետը, փիլիսոփայության դոկտոր, Պրինստոնի համալսարանի իրավագիտության և քաղաքատնտեսության պրոֆեսոր: Մի շարք պետահրավագիտական մենագրությունների հեղինակ:

Հայկական հարցում հանդես էր գալիս որպես Ուիլյամ Գլադստոնի ուղեգծի հետևողական հետևորդ:

Նոր աշխարհակարգի հաստատման գործում փորձում էր կիրառել *ժողովրդավարության, հավասարության անկրանցության* և *ինքնորոշման* համամարդկային սկզբունքներն ու արժեքները: Գործնական քաղաքականության ոլորտում զուգորդում էր բավականին արդյունավետ գաղափարապաշտությունն (իդեալիզմ) ու օգտապաշտությունը (պրագմատիզմ):

1. Այդուհանդերձ, «սրիկայական» այդ դաշնագրի տրամաբանության շրջանակում էլ տեղի ունեցավ Հայաստանի հոշոտումը, 1920 թվականի աշնանը, Քեմալ-Լենին տանդեմի կողմից:

2. Նախագահ Վիլսոնի ընդունած սահմանները՝ Վաշինգտոնում ՀՀ դեսպան Գարո Փաստրմաճյանի կողմից ներկայացված և պաշտպանված գիծը, մոտավորապես նույնն էին, ինչ նախատեսել էր Փարիզի ազգային համագումարի (1919 թ. փետրվարի 24-ապրիլի 22) սահմանորոշ հանձնախումբը (Տե՛ս Փափազյան Վ., Իմ հուշերը, Կահիրե, 1957, հ. III, էջ 47):

** «Եթե խորհրդային ուժերը,- գրում է իր նամակի 2-րդ կետում Քեմալն իր երկվորյակին՝ Լենինին,- ծրագրում են ռազմական գործողություններ սկսել Վրաստանի դեմ կամ դիվանագիտական ճանապարհով, իրենց ազդեցության միջոցով, Վրաստանին հարկադրել Միության մեջ մտնելու եւ ձեռնամուխ լինելու Կովկասի տարածքից անգլիացիների վտարմանը, ապա թուրքական կառավարությունը իր վրա է վերցնում կայսերապաշտ (իմպերիալիստական) Հայաստանի դեմ ռազմական գործողությունները և հանձն է առնում հարկադրել Ադրբեջանի հանրապետությանը մտնելու խորհրդային պետության կազմում»:

*** ԱՄՆ-ում նշում էին. «այնքանով, որքանով դա վերաբերում է ԱՄՆ-ին և Դաշնակիցներին, հրարից կամ նրա չեղյալ հայտարարումը չի կարող ազդել Վիլսոնի իրավարարական վճռի վրա, քանզի Նախագահի որոշումը հենվում է ոչ թե Սևրի 1920 թ. օգոստոսի 10-ի դաշնագրի վրա, այլ Դաշնակիցների Գերագույն խորհրդի 1920 թ. ապրիլի 26-ի հրավիրագրի:Խորհրդի հրավիրագիրը և Սևրի պայմանագիրը միմյանց հետ կապված չեն և միմյանցից անկախ են: Հրավիրագրում Նախագահին ոչ մի պայման առաջադրված չէ» (Lausanne Treaty, Turkey and Armenia. N.Y., 1926, էջ 166):

ՀՅԴ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ 2009 Թ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ ՕՐԻՆԱԳԾԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ ԴԻՄԱԳՐԱՎԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

27 նոյեմբերի 2008 թ.

ՀՅԴ-ի կողմից 2009 թ. բյուջեի նախագծի քննարկումների ընթացքում ներկայացված առաջարկություններից իրացվել են ավելի քան 600 մլն. դրամի առաջարկություններ, որոնք գերազանցապես վերաբերում են ՀՀ մարզերում և հեռավոր բնակավայրերում կրթամշակութային կյանքի ակտիվացմանն ու սոցիալական մի շարք խնդիրների լուծմանը: Ելնելով այս հանգամանքից, ինչպես նաև կոալիցիոն համաձայնագրի դրույթներից, ՀՅԴ-ն կողմ է քվեարկում 2009 թ. բյուջեի նախագծին:

Ընդհանուր առմամբ բյուջե-2009-ը բնութագրվում է՝

1. տնտեսական աճի 9,2 տոկոս իրական աճի կանխատեսմամբ,
2. եկամուտների 21,37 % և ծախսերի 15,01 % աճով (կամ միջին ժամկետ ծախսերի 2009-2011 թթ. ծրագրով նախատեսվածից եկամուտներն ավելի են 4,7 մլրդ. դրամով, իսկ ծախսերը՝ պակաս են 1,1 մլրդ. դրամով),
3. բյուջեի ծախսերում սոցիալական աստիճանի 47,1 տոկոս, պաշտպանության, հասարակական կարգի պահպանության և ազգային անվտանգության ապահովման ոլորտների 22,5 տոկոս և տնտեսության ճյուղերի 13,5 տոկոս բաշխվածությամբ:

Հարկ ենք համարում ՀՀ կառավարության ուշադրությունը հրավիրել հետևյալ մտահոգությունների վրա՝

1. հիմնված լինելով ՄԺԾԾ-ի վրա, բյուջեի նախագիծը չի կառուցվել միջազգային ֆինանսական և տնտեսական ճգնաժամի մարտահրավերներից բխող ռիսկերի կանխարգելման, նվազեցման կամ չեզոքացման սկզբունքի հիման վրա և ըստ էության որոշակի իմաստով կրում է նախորդ ժամանակաշրջանի իներցիան,
2. բյուջե 2009ը չի մշակվել ծրագրային բյուջետավորման սկզբունքի ամբողջական գործադրմամբ,

3. տնտեսական իրական աճի 9,2 տոկոս կանխատեսվող մեծությունը պարունակում է ռիսկի բարձր աստիճան: Տնտեսական աճի նախատեսված մեծությունը չապահովելու դեպքում վտանգվում են եկամուտների հավաքագրման չափը և նախատեսված ծախսերը,

4. բյուջեի դեֆիցիտը փոքր մեծություն է, որի ծրագրավորված չափը սահմանափակում է տնտեսության դիվերսիֆիկացման ու խթանման և սոցիալական առաջընթացի ապահովման հավելյալ ծրագրերի իրականացման հնարավորությունը,

5. դեռևս շարունակում է ցածր մնալ հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը (նախատեսվում է 17,4 տոկոս ցուցանիշ, 2008 թ. 17 տոկոս ծրագրային ցուցանիշի դիմաց),

6. ցածր է նախատեսված նաև սոցիալական ապահովության վճարներ/ՀՆԱ հարաբերակցությունը (3,1 տոկոս, նախորդ տարվա 2,9 տոկոսի դիմաց),

7. գլոբալ և բիզնես մրցունակության ուղղությամբ երկրին առավել նպաստավոր դիրք ապահովելու տեսանկյունից բյուջե-2009-ը պահպանում է իր չեզոք ազդեցությունը:

Նշված խնդիրները լուծելու և միջազգային ֆինանսական և տնտեսական ճգնաժամից բխող մարտահրավերներին դիմագրավելու համար առաջարկում ենք՝

1. Կիրառել պետբյուջեի եկամտային դիվերսիֆիկացված քաղաքականություն, հարկային ու մաքսային վարչարարության այնպիսի մեթոդներ, որոնք չհանգեցնեն տարակարծիք մեկնաբանությունների, տնտեսական խաթարումների և քաղաքական շահարկումների:

2. Հաշվի առնելով նախորդ տարիների բյուջեների վերաբերյալ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից ներկայացված տվյալները, ՀՀ կառավարությունը պետք է առավելագույնս ձեռնպահ մնա հավելյալ հավաքագրված եկամուտների կամ բյուջեի դեֆիցիտի մեծացման միջոցով նոր ծախսային ծրագրերի իրականացումից՝ առանց ՀՀ ԱԺ-ում լրացուցիչ քննարկումներ կազմակերպելու (օրինակ՝ 2007 թ. բյուջետային եկամուտների և ծախսերի ընդհանուր փոփոխությունները կազմել են 2007 թ. ՀՀ ԱԺ-ի կողմից հաստատված բյուջեի մինչև 18%-ը):

3. Անհրաժեշտ է խստագույնս հետևել բյուջեով նախատեսված ծրագրերի ճշգրիտ կատարմանը, իսկ դրա անհնարինության կամ ծրագրերի ծավալների (չափերի) փոփոխության դեպքում հարկ է դրանց քննարկմանը մասնակից դարձնել նաև ՀՀ ԱԺ-ին:

4. Մասնավոր տրանսֆերտների և աշխատատեղերի կանխատեսվող կրճատումներով պայմանավորված սպասվող սոցիալական լարվածության աստիճանը մեղմացնելու նպատակով, ի հավելումն ՀՀ կառավարության կողմից ձեռնարկվող գործողությունների, առաջարկում ենք քննարկել և իրացնել հետևյալ գործողությունները՝

ա) փոքր ու միջին բիզնեսի աջակցության ծրագրերը մշակել ու գործադրել տարածքների մասնագիտացման և տնտեսության ոլորտների ու ռեսուրսների հարաբերական առավելությունների հենքի վրա,

բ) խրախուսել և ֆինանսական աջակցության տարբեր սխեմաներ կիրառել այն տնտեսավարող սուբյեկտների համար, ովքեր ժամանակակից տեխնոլոգիաների ներդրմամբ, նորարարական մոտեցումներով և մասնագիտական կրթության ծրագրերով ձգտում են բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը՝ առանց առնվազն կարճաժամկետ հատվածում աշխատատեղերի կրճատման,

գ) մշակել և գործադրել աշխատուժի կազմակերպված ժամանակավոր արտահանման ծրագրեր՝ պետություն-մասնավոր համագործակցության հայեցակետին համապատասխան,

դ) իրականացնել ազգաբնակչության եկամուտների իրական բարձրացման քաղաքականություն, առաջնահերթ դիտարկելով առաջնային եկամուտները (մասնավորապես՝ աշխատավարձերի բարձրացման ուղղությամբ կարևոր է հանդես գալ նվազագույն աշխատավարձի վերանայման առաջարկությամբ՝ հիմքում դնելով կենսապահովման նվազագույն բյուջեն կամ դրան ներկայումս փոխարինող նվազագույն սպառողական զամբյուղը, որի համաձայն նվազագույն աշատավարձը կարող է սահմանվել 40000 դրամ), հանրային ծառայողների վարձատրության միասնական ռազմավարության հիման վրա առաջարկել քաղաքացիական և հանրային ոլորտի այլ ծառայողների բազային աշխատավարձի բարձրացում,

ե) վերանայել աղքատության հաղթահարման ռազմավարությունը (իմա՝ կայուն զարգացման

ռազմավարություն)՝ նպատակ ունենալով բարձրացնել պետության աջակցող դերն ու պատասխանատվությունը նոր աշխատատեղերի ստեղծման գործում, իսկ նյութական աղքատության հաղթահարման ուղենիշ դարձնել կենսապահովման նվազագույն բյուջեի մեծությունը,

զ) հարկ է ձեռնպահ մնալ կենսաթոշակային բարեփոխումների պարտադիր կուտակային համակարգի առաջարկվող սցենարից:

Կարևոր է նաև արձանագրել, որ թեև 2009 թ. պետական բյուջեով մշակույթի նախարարության համակարգում, ինչպես նաև մարզային ենթակայությամբ գործող գրադարանների (16), թանգարանների (39), թատերահամերգային կազմակերպությունների (40) աշխատողների միջին աշխատավարձը բարձրացել է 10 %-ով (շուրջ՝ 5350 աշխատակից, 47827 դրամ միջին աշխատավարձով), սակայն դա սոցիալական այլ ոլորտների միջին հաշվարկային աշխատավարձից նվազ է գրեթե երեք, իսկ հանրապետության միջինից՝ երկու անգամ: Մինչդեռ մշակույթը դիտվում է ազգային անվտանգության և երկրի կայուն զարգացման բաղադրիչ: Ուստի տարիներով կուտակված աշխատավարձային տարբերությունը նվազեցնելու, սոցիալական լարվածությունը մեղմելու և սոցիալական համերաշխություն ապահովելու հրամայականից ելնելով, հարկ է սահմանել ոլորտի աշխատավարձը առնվազն հանրապետության միջինին հասցնելու ժամանակացույց:

5. Պետության կողմից տնտեսական միավորների կապիտալների մասնակցության հարցերի քննարկման ժամանակ առաջնահերթ համարել ռազմավարական ապրանքատեսակների արտադրության և/կամ ներմուծման ոլորտում հանդես եկող կազմակերպությունների ստեղծումը կամ դրանցում խոշոր մասնակցության ձեռքբերումը:

6. Արտահանման խրախուսման նպատակով աջակցել ազգային արտադրողներին վերջիններիս ապրանքատեսակները արտաքին շուկաներում իրացնելու հարցում, մասնավորապես՝ ձևավորել միջազգային մրցակցության պահանջներին համապատասխանող (որակի միջազգային ստանդարտներից բխող) հայկական ապրանքատեսակների համախումբ, որոնց իրացման համար այլ երկրների հետ կնքել առևտրային տարածքների տրամադրման, այդ երկրներում հայկական ընկերությունների իրավունքների պաշտպանությամբ հանդես գալու իրավասություններով:

7. ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ քննարկել և իրականացնել արտահանմանն աջակցող արտարժույթային քաղաքականություն (կրկին փաստում ենք, որ կարգավորվողլողացող կուրսի տակտիկան զուգորդվելով գնաճի զսպման ԿԲ-ի որդեգրած քաղաքականության հետ, չի ապահովում ցանկալի արդյունք՝ խաթարվում է վճարային հաշվեկշիռը, գնաճը դառնում է անկանխատեսելի և չվերահսկվող):

8. ՀՀ կենտրոնական բանկի հետ համատեղ քննարկել և իրականացնել էժան վարկերի քաղաքականություն. «էլիտար» բանկային համակարգից անցում կատարել տնտեսությանը և բնակարանաշինությանը աջակցող վարկային քաղաքականության: Կարևոր ենք համարում նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից այնպիսի քաղաքականության գործադրումը, որը կերաշխավորի ՀՀ առևտրային բանկերի ղեկավար անձնակազմերի չափազանց բարձր վարձատրությունների ու հատուցումների զսպումը, ինչպես նաև բանկերի օպերացիոն ծախսերի նվազեցումը, որոնք ի վերջո էական ազդեցություն կարող են ունենալ վարկային տոկոսադրույքների նվազեցման հարցում:

9. Տնտեսությունում մրցակցային կարգերի հաստատման նպատակով հարկ է գործադրել հակամենաշնորհային ակտիվ քաղաքականություն:

Այս առաջարկություններն ու գործողությունները, ի հավելումն ՀՀ կառավարության գործադրվող ջանքերի, միտված են համախառն առաջարկի և պահանջարկի համակարգային խթանման քաղաքականության և կոալիցիոն հուշագրով առաջադրված 22 առաջնահերթությունների իրականացմանը:

ՀՅԴ խմբակցությունը հայտնում է իր աջակցությունը նշված առաջարկությունների ամբողջական իրացման գործում:

ՍԻՐԵԼԻ ԵՐԵՎԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԼԻԼԻԹ ԳԱԼՍՏՅԱՆ

Երեւանի քաղաքաշինական հիմնախնդիրներին նվիրված խորհրդարանական լսումներում հիմնական զեկուցումով հանդես եկավ ԱԺ ՀՅԴ խմբակցության անդամ ընկեր. Լիլիթ Գալստյանը: Որոշ կրճատումներով տպագրելով այս զեկույցը, «Դրօշակը» նպատակ ունի իր էջերում շարունակել հարցի բազմակողմանի քննարկումը:

Մեր իրականության վերջին տարիները բնութագրվում են տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի բարելավման տեսանելի միտումներով, իրապես անուրանալի է: Տարբեր վերլուծություններ և հրապարակային հաշվետվություններ փաստում են, որ քաղաքաշինությունը Հայաստանի տնտեսության ամենադինամիկ ճյուղն է: 2004թ-ից սկսած արձանագրում ենք երկնիշ տնտեսական աճ, ինչը մեծապես պայմանավորված է կապիտալ շինարարության ոլորտի աճով: Վերջին երեք տարիներին շինարարության աճը կազմել է ավելի քան 28%, ընդ որում 2008 թ. տնտեսական աճի 4% ապահովվել է շինարարության հաշվին:

Այս թվային պատկերով հպարտանալու առիթ շատերն են ունենում: Եվ բնական է, որովհետև տնտեսական ցուցանիշներից զատ, շինարարությունը կամ քաղաքաշինությունը կայունության, հուսալիության, վաղվա օրվա նկատմամբ հավատի գրավական է, երկրի զարգացման պատկեր: Բայց անդրադառնո՞ւմ ենք, արդյոք, թե այս ցուցանիշների, ծավալների ետևում ինչ որակական չափանիշներ



են գործում, ինչ լրջագույն խնդիրներ են թաքնված:

2007 թվականին ընդունված ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ հայեցակարգը Պետության և ժողովրդի անվտանգության ոլորտում որպես հիմնարար արժեք, արձանագրում է **ներկա և գալիք սերունդների համար բարենպաստ միջավայրի ձևավորումը:**

Փորձենք հասկանալ, թե Երևանում իրականացվող շինարարության տեսանկյունից որքանով է միջավայրը բարենպաստ ներկա և գալիք սերունդների համար:

Այն, որ քաղաքաշինությունը բազմաշերտ համակարգ է, որ պետք է ապահովվեն թե պետության, թե հասարակության ու թե անհատի շահերը, պաշտպանվեն քաղաքաշինական, շրջակա միջավայրի պահպանության հաստատված նորմերը, պատմամշակութային ու ազգային արժեքներն ու ավանդույթները, ապացուցելու կարիք չունի: Բայց, ցավոք սրտի, սրանք թղթի վրա մնացող օրենսդրական պահանջներ են, որ մեր իրականության հետ գործնական առնչություն չունեն:

Այսօր քաղաքակիրթ ողջ աշխարհի ուշադրության կենտրոնում, ֆինանսատնտեսական ճգնաժամից ոչ պակաս կարևորությամբ, **էկոլոգիական խնդիրներն են, գլոբալ տաքացման դեմ պայքարը: Ի՞նչ ենք անում մենք:**

Մայրաքաղաքում և հատկապես նրա կենտրոնում իրականացվող իրավիճակային, կետային բարձր խտության կառուցապատման արդյունքում Երևանը «էկոլոգիական աղետի գոտի» վերածվելու ճանապարհին է: Գետնամերձ օզոնը 2,2 անգամ գերազանցում է թույլատրելի սահմանը: Վերջին մի քանի տարիների ընթացքում Երևանը զրկվել է ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների 2/3 ից, իսկ կանաչ գոտիների կրճատման հետևանքով քաղաքի օդային ավազանը կորցրել է ինքնամաքրման հատկանիշը: Մարդկային գործոնի արդյունքում Երևանը տանում ենք անապատացման: Այսպիսին է էկոլոգիական, հասարակական 38 կազմակերպությունների բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքում փաստված գնահատականը, որն իր արտահայտությունն է գտել 2007թ ին ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի շրջանակներում հրատարակված Երևանի բնապահպանական վիճակի մասին զեկույցի մեջ:

Կենտրոնի չհամակարգված, խիտ կառուցապատումը տրանսպորտային ուղիների լրացուցիչ գերծանրաբեռնվածություն է առաջացրել, որոշ դեպքերում՝ 120-130% ՝ իր հետ բերելով էկոլոգիական, մարդկային կյանքի ու կենսագործունեության համար վտանգավոր, սթրեսային իրավիճակներ:

Դեռ Խորհրդային շրջանից **Հայաստանը տարածական անհամաչափ զարգացման խնդիր ուներ:** Այդ իրողությունը ոչ միայն պահպանվել է մեր օրերում, այլև ազգային անվտանգության տեսակետից ստացել տագնապացնող զարգացումներ: Ողջ հանրապետության շինարարական ծավալների 85-90 %-ը իրականացվել է մայրաքաղաքում: Մեր գործարարների, շինարարների ու ճարտարապետների երևակայությունը չգիտես ինչու մայրաքաղաքի հենց կենտրոնում է աշխատում: Շինարարական ծավալների շարունակական կենտրոնացումը Երևանում խաթարել է ներդաշնակ զարգացման, սոցիալական արդարության ու համերաշխության սկզբունքը ոչ միայն մայրաքաղաքում, այլև ողջ հանրապետությունում:

Արդյո՞ք իրավունք ունենք գերծանրաբեռնել Երևանը, որ կենտրոնացած է հանրապետության բնակչության 1/3 ը, որ բնակելի ֆոնդի 70%-ն առանց այն էլ սեյսմակայուն չի, իսկ չհամակարգված, լոկալ շինարարություններն հղի են տեխնածին երկրաշարժերով:

Տարածական զարգացման և պլանավորման բացակայությունը կամ անարդյունավետ քաղաքականությունը հանգեցնում է նաև բազմաթիվ այլ խնդիրների: Կենտրոնի խիտ կառուցապատումը և նրանց համեմատ ընդհանուր օգտագործման ենթակառուցվածքների անհամամասնու-

Աբովյան փողոցի տաղավարներ

թյունն այսօր ոչ միայն լրացուցիչ լուծումներ է պահանջում, այլև ծանրաբեռնվածություն առաջացնում բյուջեում: Ինչո՞ւ դիտի այս կամ այն գործարարի շահի, կամ համադասական մարմինների անհեռատես պլանավորման արդյունքում առաջացած ենթակառուցվածքային խնդիրների լուծման համար բյուջեից միջոցներ տրամադրենք, երբ այդ գումարները կարող էին ուղղորդել շատ ավելի առաջնահերթ, ասենք սահմանամերձ գոտիների զարգացման խնդիրներին: Ուզում եմ լավատես լինել, որ գոնե այս՝ ենթակառուցվածքների պլանավորման պարագայում կառաջնորդվենք առաջադիմական փորձը ներդնելու ու մայրաքաղաքի ողջ բնակչության շահը պաշտպանելու մեկնակետով:

Կառուցապատումների մեծ մասն իրականացվում է հանրային կարծիքի անտեսմամբ, մարդու իրավունքների ոտնահարմամբ, խախտվում են ՀՀ օրենքներ ու միջազգային համաձայնագրեր:

Թող փորձի սովորական քաղաքացին քաղաքաշինության նախարարությունն-Երևանի քաղաքապետարան, համայնք հանգույցում խնդրին առնչվող հարց բարձրացնել, լավագույն դեպքում խորհուրդ կտան այլ իրավասու, մասնագիտական կազմակերպությունների միջոցով ճշտել քաղաքաշինական նորմերի համապատասխանությունը, շինարարության օրինականությունը: Ու մինչ քաղաքացին կփորձի իր և իր միջավայրի իրավունքները պաշտպանել, կամ կառուցապատումը կմոտենա ավարտին կամ էլ օրինականությունը հաստատող փաստաթղթեր կհայտնվեն:

Տեղին է հիշել ՀՀ Սահմանադրության 3 հոդվածը, որն ասում է՝ **Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջական գործող իրավունք:**

Եթե խախտվում են Երևանի գլխավոր հատակագիծն ու գոտևորման նախագիծը, նույնն է թե պետական շահը, արհամարհվում են քաղաքաշինական խորհրդի և նույնիսկ քաղաքապետի որոշումները, ապա պարզ քաղաքացիների շահերի մասին խոսելը միամտություն է:

Այսպես, Երևանի քաղաքապետի 2005թ. հուլիսի 15 ի, 1555-Ա որոշու-

Աբովյան փողոցի տաղավարներ

Սարյան 23, թիվ 29 դպրոց

մով Երևանի հանրապետության հրապարակին հարակից տարածքներում կառուցվող շենքերի բարձրությունը պետք է սահմանափակվեր այն հաշվով, որպեսզի Հանրապետության հրապարակի ամբողջ տարածքով բոլոր դիտակետերից որևէ շենքի ուրվանկարը չդիտվեր հրապարակը շրջապատող շենքերի ուրվագծերի սահմաններում:

Որոշումը թղթի վրա է մնացել: Օպերայի շենքը շրջակայքի անհամամասնական ճարտարապետական լուծումներով խեղդելուց հետո, հերթը Հանրապետության հրապարակինն է: Հրապարակի շրջանաձև կառույցների թիկունքում ճարտարապետական ինչ ոճի ու բարձրության շենք ասես, որ չի բարձրացել: Նույնն է պատկերը Մաշտոց պողոտայի պարագայում: Տարածքներ յուրացնելու արշավանքի դեմ անզոր են անգամ պետական կառույցները: Արտգործնախարարության թիկունքում իրականացվող շինարարության արդյունքում նախարարությունը խավարի մեջ է հայտնվել: Ու դեռ միջազգային պատվիրակություններ էլ ընդունում ենք այդ շենքում:

Կյանք չունեցավ նաև քաղաքապետի մեկ այլ որոշում, որով Կենտրոնի միջին հարկայնությունը չպիտի գերազանցեր 4.5հարկը:

Կառույցների սեյսմակայունության և հուսալիության առումով ևս իրավիճակը մեղմ ասած մխիթարական չէ: Մոռացվել կամ չեն կարևորվում 88-ի երկրաշարժի դասերը: Եվ դա այն դեպքում, երբ մեր տարածաշրջանը գտնվում է 100 տոկոսանոց սեյսմիկ գոտում, իսկ ուժեղ երկրաշարժերը կրկնվելու պարբերականություն ունեն: Ըստ երկրաբանների խիտ կառուցվող բարձրահարկերը բարձրացրել են սեյսմիկ ռիսկերը, և ոչ միայն այն պատճառով, որ Կենտրոնը անբարենպաստ է սեյսմիկ առումով (9 բալ), այլև այն, որ կառուցապատումն իրականացվում է սեյսմիկ շինարարության նորմերի խախտումով, առանց ժամանակակից ինժեներաերկրաբանական քարտեզի:

Ըստ Քաղաքաշինության նախարարության տեղեկանքի 2004 2007թթ 4801 օբյեկտներում կատարած ստուգումների արդյունքում պարզվել է, որ 1658 ում շինաշխատանքները իրականացվել են առանց որակի տեխնիկական հսկողության, իսկ օբյեկտների 54% ում էլ որակի տեխհսկողություն են իրականացրել համապատասխան մասնագիտություն չունեցող անձինք: Քիչ չեն նաև դեպքերը, երբ նույն կառույցի առնչությամբ միևնույն գործառույթ իրականացնող երկու տարբեր կազմակերպություն իրարամերժ եզրակացություն են տվել: Ինչպես ասում են՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Փորձեք Երևանի կենտրոնում խաղահրապարակներ գտնել: Երևանի կենտրոնի խաղահրապարակները, շենքամիջյա հնարավոր գրեթե բոլոր հողակտորները վերածվել են հակահրդեհային և ինսոլացիոն, քաղաքաշինական նորմերի խախտումով կառուցվող բարձրահարկերի շինհրապարակների: Հասցեները տասնյակներ են և հայտնի: Արդյունքում աղբամանները բակերից դուրս են մղվել կենտրոնական փողոցներ, աղբի մեջ թաղելով առանց այն էլ աղբի մեջ ողողված քաղաքը:

Տարածքներ գրավելու ճանապարհին չեն խնայվում անգամ դպրոցները: Բազմաթիվ օրինակներից նշեմ միայն երկուսը՝ Սարյան 23 հասցեում, թիվ 29 դպրոցին պատակից կառուցած 9 հարկանի շենքի արդյունքում եռահարկ դպրոցի ողջ ձախ հատվածը՝ 15 լուսամուտներով զրկվել են լույսից, հայտնվելով պատից ընդամենը 30-50 սմ հեռավորության վրա: Մ. Իշխանի դպրոցին դարձյալ պատակից (Բուզանդի 107) ցցվել են նորակառույցի ցցասյուները :

Ես մի կողմ եմ թողնում ճարտարապետական բարոյականության և էթիկայի հարցը՝ մի պահ վերանանք այն ռոմանտիկ հարցից, թե ինչպես կարելի էր ճարտարապետներ Թամանյանի կամ Աղաբաբյանի ժառանգության նկատմամբ այդքան արհամարհական վերաբերվել և նրանց ճարտարապետական կոթողներն այլանդակել կցակառույցներով Հապա մեր երեխաների անվտանգությունը, հապա գիտելիքի հասարակությունը: Ասված չանի, եթե երկրաշարժ լինի, Սարյան 23 ի 9 հարկանի շենքը փլվելու է թիվ 29 դպրոցի վրա, Բաղրամյան 53 ի 14 հարկանի շենքը 78 դպրոցի վրա, Թումանյանի բակի շենքը Շահումյան դպրոցի վրա, մի նոր բարձրահարկ էլ խոյանում է Լևոն Շանթի դպրոցի վրա: Նույնիսկ հակահրդեհային գոտիներ չեն թողնվել, որպիսի փրկարարները կարողանան մոտենան շենքերին:

Հին Երևան ռեստորան

Թումանյան, Շահումյան դպրոց

Նորահայտ շինությունների արդյունքում շրջափակման մեջ են հայտնվել մշակութային ու ճարտարապետական բացառիկ նշանակություն ունեցող Փարաջանովի թանգարանն ու Կամերային երաժշտության տունը:

Երևանի և ցանկացած եվրոպական մայրաքաղաքի համար պատվաբեր Աբովյան փողոցը վերածվել է տոնավաճառային տաղավարների հարթակի:

Փողոցը կարող էինք գերակա հանրային շահ համարել, ինչպես արվեց օրերս Աճառյան փողոցի հետ, և զերծ պահել տաղավարային առևտրից, բայց ոչ՝ տաղավարների թույլտվության տակ առանց համապատասխան փաստաթղթերի այսօր գործում են շուրջ 12 հիմնական կառույցներ: Ո՞ր մնաց մեր քաղաքային արժանապատվությունն ու կույտուրան 10 տարվա վաղեմության ամերիկյան հին շոր հին կոշիկը հենց Աբովյան փողոցի մայթի վրա պիտի վաճառվի, Բիլայնի կետը կամ վարսավիրանոցը նույնպես:

Հյուսիսային պողոտան դեռ ամբողջությամբ չշահագործած՝ Հին Երևան ռեստորանն արդեն հասցրել է աղօրինի կցակառույցով գրավել Թումանյան և Հյուսիսային պողոտայից մի հատված՝ խաթարելով նախագիծն ու պողոտայի մուտքը:

Հասցեները, ինչպես նաև հիմնավորումները հայտնի են համապատասխան մարմիններին, ավելին՝ հաստատվել և փաստվել են նաև քաղաքաշինական պետական տեսչության վերահսկողության բաժնի կողմից:

Յավոք սրտի մեր օրերում քաղաքաշինությունն ընկալվում և իրականացվում է որպես շինարարական բիզնես, անհատի կամ գործարարի շահի հետապնդում:

Օրինակները շատ են: Եզրակացությունը այսպիսին՝ չեն գործում քաղաքաշինության և բնապահպանության պլորտները կարգավորող մի շարք օրենքներ: Պլորտների իրավական դաշտի, միասնական չափորոշիչների և նորմերի անկատարության, ու նաև հսկողության և վերահսկողության գործառույթներ իրականացնող կառույցների անարդյունավետ գործունեության արդյունքում կանգնել ենք խնդիրների առաջ, որոնք համալիր լուծումներ են պահանջում:

Երևան քաղաքը քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ է և անհետաձգելիորեն պահանջում է հստակեցնել, իրավական դաշտ բերել, կանոնակարգել Երևանի կառուցապատման ու զարգացման հայեցակարգը:

PRESS STAND

- Առաջարկում ենք Ձեզ բաժանորդագրվել ՀՅԴ պաշտոնաթերթ «Դրօշակ»-ին:
- Առաջարկում ենք մատչելի գին եւ ապահովում ենք պարբերականի առաքումը Ձեր ցանկացած ժամին:
- «Պրես Ստենդ»-ը աշխատում է Ձեր հարմարավետության համար:
- Ինֆորմացիոն դարաշրջանում ընտրեք ինֆորմացիա ստանալու ամենա-հարմարավետ ուղին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՎԵ՛Ք

Առաքումն իրականացվում է
ԱՆՎՃԱՐ:

522-199

«Պրես Ստենդ» ՍՊԸ
ՀՀ, Երևան, Արշակունյաց 2 պող.,
4-րդ հարկ, 417-420 ս.,
հեռ.՝ (+374 10) 522-199, 544-199
Ֆաքս՝ (+374 10) 544-199
էլ. հասցե՝ LAzizyan@armpress.am



Վահե Սարգսյան
«Միտֆ» վերլուծական կենտրոնի
վերլուծաբան

Սամցխե-Ջավախք հայկական տարածաշրջանի ժողովրդագրական վիճակը վերջին 20-ամյակում (1988-2008 թթ.)

Ինչ Սամցխե-Ջավախք-Ծալկա տարածաշրջանի ժողովրդագրության վերջին քառամյակի համեմատական վերլուծությանն անցնելը, հարկ ենք համարում ներկայացնել ընդհանուր Վրաստանի մարդահամարի տվյալները, համեմատության մեջ դնելով 1989 և 2002 թվականների ցուցանիշները, որոնցից երևում է, որ վերջին 13 տարում կտրուկ նվազել է երկրում ապրող ազգային փոքրամասնությունների թվաքանակը՝ 29,9 %-ից հասնելով 16,3 %-ի: Թեև նվազմանը, հայերը Վրաստանում իրենց թվաքանակով դարձյալ առաջին տեղում են, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ 2002 թ. մարդահամարը չի անցկացվել ինչպես Աբխազիայում, այնպես էլ՝ Հարավային Օսեթիայում: Իսկ Աբխազիայում, ինչպես հայտնի է, նույնպես ապրում են մեծ թվով հայեր, որոնք չեն զիջում նույնիսկ աբխազներին: Օրինակ, 1995 թ. տվյալներով (պատերազմի ավարտից հետո), Աբխազիայում բնակվում էր 91,16 հազար աբխազ, 89,9 հազար վրացի, 61,96 հազար հայ, 51,56 հազար ռուս, 3,5 հազար հույն:

Հայերի որոշ թվաքանակ ապրում է նաև Հարավային Օսեթիայում, որտեղ նույնպես, ինչպես նշեցինք, չի անցկացվել 2002 թ. մարդահամարը:

Վրաստանի բնակչության ազգային կազմը և թվաքանակը 2002 թ. մարդահամարի տվյալներով (զուգահեռ բերված են նաև 1989 թ. տվյալները).

Ազգությունը 1989 թ. թվաքանակը (հազ. մարդ) 2002 թ. թվաքանակը (հազ. մարդ) 1989 թ. ընդհանուր բնակչության հարաբերակցությունը (%) 2002 թ. ընդհանուր բնակչության հարաբերակցությունը (%)

Վրացիներ
3787,4 3661,1 70,1 83,7

Հայեր
437,2 248,9 8,1 5,7

Ադրբեջանցիներ
307,6 284,8 5,7 6,5

Ռուսներ
341,2 32,6 6,3 0,75

Օսեր
164,1 38,0 3,0 0,87

Հույներ
100,3 15,1 1,9 0,35

Աբխազներ
95,9 3,5 1,8 0,008

Ուկրաինացիներ
52,4 7,0 1,0 0,0016

Ընդամենը
5400,8 4371.5 100 100

Ինչպես երևում է աղյուսակից, 13 տարվա ընթացքում ամբողջ Վրաստանի տարածքում հայերի թիվը նվազել է 188.300-ով, նույնիսկ եթե հաշվի առնենք, որ ավելի քան 60-70 հազար հայեր 2002 թ. չեն հաշվառվել Աբխազիայի և Հարավային Օսեթիայի տարածքում, ապա դարձյալ նվազած հայերի թվաքանակը կկազմի շուրջ 120 հազար, ինչն այնքան էլ փոքր թիվ չէ:

Վրաստանում ապրող հայերի շուրջ կեսից ավելին ապրում են Սամցխե-Ջավախք-Թռեղք (Ծալկա) տարածաշրջանում: Չնայած Վրաստանի նախագահի 1994 թ. հուլիսի 31-ի հրամանագրով ստեղծված արհեստական նահանգային վարչամիավորին, երբ տարածաշրջանից դուրս թողնվեց մեծամասամբ հայաբնակ Ծալկան, այնուամենայնիվ երկրամասում միշտ էլ բացարձակ մեծամասնություն են կազմել հայերը:

Ստորև բերենք տարածաշրջանի 1989 և 2002 թվականների բնակչության թվաքանակը և ազգային կազմի փոխադարձ տոկոսային հարաբերակցությունը.

1. Սամցխե-Ջավախքի բնակչության թվաքանակը և ազգային կազմը 1989 թ. դրությամբ.

Շրջան	Վրացիներ	Հայեր	Ռուսներ	Ընդամենը
Ախալցխայի	25.648 46,8%	23.469 42,8 %	3426 6,2 %	54822
Ադիգենի	19.491 91,6%	1237 5,8 %	294 1,4 %	21282
Ասպինձայի	10.753 80,1%	2565 19,1 %	45 0,3 %	13432
Ախալքալաքի	3005 4,3%	63092 91,3 %	1737 2,5 %	69108
Նինոծմինդայի	454 1,2%	33.964 89,6 %	3161 8,3 %	37895
Ընդամենը	59.351 30,2%	124.327 63,3 %	8663 4,4 %	196539

2. Սամցխե-Ջավախքի բնակչության թվաքանակը և ազգային կազմը 1997 թ. դրությամբ.

Շրջան	Հայեր	Վրացիներ	Ընդամենը
Ադիգենի	1.407 5,8 %	22.222 91,6 %	23629
Ասպինձայի	2780 19,1 %	11.660 80,1 %	14440
Բորժոմի	3816 10,0 %	29.518 77,6 %	33334
Ախալցխայի	23.644 42,8 %	25.688 46,8 %	49332
Ախալքալաքի	62.814 91,3 %	3.027 4,4 %	65841
Նինոծմինդայի	34.697 89,6 %	451 1,2 %	35148
Ընդամենը	129.158 58,25 %	92.566 41,75 %	221.724

Ինչպես տեսնում ենք, հայերի թիվը այս ընթացքում աճել է չնչին տոկոսով. եթե առանց Բորժոմի շրջանի հաշվառման 1989 թ. հայերի թիվը կազմում էր 124.327 կամ 63,3 %, ապա 1997 թ. արդեն Բորժոմի շրջանի հայերով հանդերձ տարածաշրջանի բնակչության թիվը կազմում էր ընդամենը 129.158 կամ 58,25 %, այն դեպքում, երբ այս ընթացքում վրացիների թիվը, Բորժոմի շրջանի միացումով, գրանցել է ահռելի աճ 59,351 (30,2 %)-ից դառնալով 92.66 կամ 41,75 %:

Բոլորովին այլ պատկեր է ուրվագծվում մեր առջև, եթե դիտարկենք 2002 թ. տվյալները.

3. Սամցխե-Ջավախքի բնակչության թվաքանակը և ազգային կազմը 2002 թ. դրությամբ.

Շրջան	Ընդհ. բնակչ.	Վրացիներ	Հայեր	Ռուսներ	Ադրբեջանցիներ	Ուկրաինացիներ	Հույներ	Եզդիներ
Ադիգենի	20,752	19,860	698	101	17	20	7	-
Ասպինձայի	13,010	10,671	2,273	34	-	5	8	-
Ախալքալաքի	60,975	3,214	57,516	157	3	14	51	-
Ախալցխայի	46,134	28,473	16,879	410	13	42	129	-
Բորժոմի	32,422	27,301	3,124	585	24	75	540	1
Նինոծմինդայի	34,305	476	32,857	943	2	6	5	-
Ընդհանուր	207,598	89,995	113,347	2,230	59	162	740	1

Ինչպես տեսնում ենք, 1997 թ. հետ համեմատած, ամբողջ նահանգում եթե վրացիները կրճատվել են ընդամենը 2571-ով, ապա հայերի նվազումը հասնում է շուրջ 15.811-ի, ինչն, ըստ ուսումնասիրությունների, ունի էլ ավելի աճելու միտում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ երկրամասից հայ բնակչության արտահոսքը գնալով հասնում է մեծ չափերի:

Ախալքալաքի շրջանն ունի 64 գյուղ, որոնցից 57-ն ամբողջությամբ հայաբնակ են, 5 գյուղերում (Գոգաշեն, Ախնիա, Կոթելիա, Պրտենա և Ջունչխա) հիմնականում վրացաբնակ են: Բարալեթ, Մուրջախեթ, Հոկամ, ոսպիա և Ազմանա գյուղերը հայ-վրացական են: Ախալքալաք քաղաքը ևս հայաբնակ է և այստեղ այլազգիները (այդ թվում՝ վրացիները) կազմում են չնչին տոկոս:

Նինոծմինդայի շրջանն ունի 31 գյուղ, որոնցից 8-ը (Փարվանա (Ռադիոնովկա), Տամբովկա, Վլադիմիրովկա, Օռլովկա, Սպասովկա, Գորելովկա և Սամեբա (Տրոիցկոյե, Կալինինո)) 19-րդ դարի կեսերին Ռուսաստանի Տավրիկյան և այլ նահանգներից վերաբնակեցված ռուս դուխոբորների գյուղեր էին: Տարբեր ժամանակներում նրանց զանգվածային արտագաղթից և բնակավայրերում հայության հաստատվելուց հետո, Նինոծմինդան դարձավ գրեթե ամբողջովին հայաբնակ: Սակայն Վրացական կառավարությունն ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ ներկայումս, մշտապես փորձել է ժողովրդագրականորեն ամրանալ հայկական այս տարածաշրջանում:

Ախալցխայի շրջանն ունի երկու քաղաք՝ Ախալցխան և Վալեն, ինչպես նաև 36 գյուղ, որոնցից 15-ը՝ հայկական են.

1. Աբաթխն
2. Խակ
3. Ծինուբան
4. Ծիրա
5. Ծղալթբիլա (Նորշեն)
6. Ծուղրութ
7. Պոլալիս
8. Մեծ Պամակ
9. Նիոխրեթ
10. Ջիֆթլիկ
11. Ճաճարակ (Ճալա)
12. Սազել
13. Սուխլիս
14. Փոքր Պամակ
15. Օրալ

Ասպինձայի գյուղերից լիովին հայաբնակ է պատմական Դամալա գյուղը, մեր ունեցած տվյալներով՝ հայերի որոշ քանակություն է ապրում նաև քաղ. Ասպինձայում (մոտ 20 տուն):

Ադիգենի մունիցիպալիտետի (շրջան) գյուղերից հայաբնակ է միայն Աբասթումանի գյուղը (համանուն ավանից 5 կմ հարավ): Հայերի փոքր թվաքանակ է ապրում նաև Աբասթումանի ավանում:



ՀԱՊԿ Կայացած կառույց՝ կայացման ճանապարհին

ՀՀ ԱԺ փոխնախագահ Հրայր Կարապետյան

- Մինչև զրույցի սկսելը, ընդունեք մեր շնորհավորանքը «Համագործակցություն» շքանշանի արժանանալու կապակցությամբ, որ տրվում է ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի Խորհրդի որոշմամբ՝ միջխորհրդարանական համագործակցության ամրապնդման գործում ունեցած ներդրման համար:

- Շնորհակալություն:

- Պարոն Կարապետյան, մի քանի ընդհանուր գծերով ներկայացրեք, խնդրեմ, այս կառույցում տիրող իրավիճակը, և այդ կառույցում Հայաստանի Հանրապետության պատվիրակության և մասնավորապես Ձեր գործունեությունը:

- Մինչև վերջին ԱՊՀ վեհաժողովին և ՀԱՊԿ խորհրդի նիստին որպես ՀՀ ԱԺ-ի պատվիրակության ղեկավար մասնակցելը, նախկինում աշխատել եմ ԱՊՀ վեհաժողովի Պաշտպանության, անվտանգության և ներքին գործերի հանձնաժողովում և արդեն քանիցս առիթ եմ ունեցել ասելու, թե ինչպիսի մոդելային օրենքներ ենք ընդունել այդ հանձնաժողովում և ինչպիսի, հաճախ նույնիսկ ծանր, վիճաբանություններ ենք ունեցել հարևան երկրների ներկայացուցիչների հետ, մասնավորապես՝ անջատողականության, էքստրեմիզմի երևույթների նկատմամբ նրանց մոտեցումների և այդ մոտեցումները հակահաբեկչական մոդելային օրենքներում ներառելու նրանց ձգտումների պատճառով: Ինչ վերաբերում է վերջին խորհրդաժողովին, ապա պետք է ասեմ, որ սա ԱՊՀ միջխորհրդարանական այն վեհաժողովն էր, որտեղ առաջին անգամ, իր պաշտոնական հայտարարության համաձայն, չէր մասնակցում Վրաստանը, բայց, չնայած դրան, օրակարգում բազմաթիվ զեկույցներ կային Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ կապված վերջին զարգացումների մասին: Սանկտ-Պետերբուրգում անցկացվեց նաև մի համաժողով՝ նվիրված «Պատերազմական գործողությունների ժամանակ պայթուցիկ նյութերի չօգտագործման մասին» (այն ժամանակ այդպես էր կոչվում) պետերբուրգյան հայտնի հռչակագրի 140-ամյակին: Սա, պետք է ասեմ, ռուսական կողմի համար

լրացուցիչ առիթ էր՝ մեկ անգամ ևս անդրադառնալու անդրկովկասյան վերջին իրադարձություններին և Վրաստանի հետ հարաբերություններին: Պատահական չէր, որ այդ համաժողովում հանդես եկավ ՌԴ վարչապետ Վլ. Պուտինը: Մեզ համար հատկապես կարևորվում է ԱՊՀ վեհաժողովի այն մասը, որ նվիրված է հավաքական անվտանգության պայմանագրին միացած երկրներին: Հայաստանի Հանրապետությունը, որպես նախագահող երկիր,- ինչպես գիտեք, այս տարի հենց Հայաստանն է նախագահում,- շատ կարևոր առաքելություն ուներ: Ոչ միայն որիորդի նիստին ենք մասնակցել, այլև ես առիթ եմ ունեցել ներկա լինել Կովկասում ռազմաքաղաքական իրավիճակի մասին քննարկումներին և հանդես գալ ելույթով, ուր նշվել է, որ այսօր չի կարելի միանշանակ ասել, թե հայ-ռուսական հարաբերություններն ընթանում են միայն բարելավման ճանապարհով: Մեկ անգամ ևս ընդգծել ենք, որ Թուրքիան շարունակում է Հայաստանի շրջափակման քաղաքականությունը, որ այդ երկիրը Հայաստանի հետ դիվանագիտական հարաբերությունների ստեղծումը պայմանավորում է Լեռնային Ղարաբաղի հարցի ադրբեջանամետ լուծումով և ամեն ինչ անում է, որպեսզի կասեցնի Հայոց ցեղասպանության փաստի համաշխարհային ճանաչման գործընթացը: Այս հարցը կարևոր էր նրանով, որ մեր դաշնակից երկրներից շատերը հայտնվել են մոլորության մեջ: Նրանք կարծում են, թե Թուրքիան ամբողջովին փոխվել է և այժմ փորձում է Անդրկովկասում վարել միանգամայն նոր քաղաքականություն, որ կարծես նույնիսկ ռուսամետ երանգներ է պարունակում: Մեր դաշնակիցների ինչ-ինչ մոլորությունների փարատման առումով շատ կարևոր էր, որ նրանք մեր հայտարարություններից հասկանային, որ Թուրքիայի հետ իրենց հարաբերությունների հետագա բարելավումը Հայաստանի շահերի հաշվին միանգամայն անընդունելի է մեզ համար և սպառնում է ՀԱՊԿ ներքին հարաբերություններին:

- Ի՞նչ եք կարծում, կայացա՞ծ կառույց է ՀԱՊԿ-ն, ինչպես, ասենք, միջազգային համանման այլ կառույցները, թե՞ դեռևս կայացման փուլ է ապրում:

- ՀԱՊԿ անդամ երկրները վեցն են: Ուզբեկստանը համարվում է յոթերորդ երկիր, որը, սակայն, հավաքական անվտանգության պայմանագրի ոչ բոլոր կետերով է համագործակցում: Այդ երկիրը, մասնավորապես, ԱՊՀ խաղաղարար ուժերի մասին պայմանագրին մասնակցում է մի շարք վերապահումներով: Պետք է ասեմ, որ ոչ բոլոր դեպքերում է այս ռազմաքաղաքական դաշինքը գործում առանց խափանումների: Այս մասին քանիցս նշել են ՌԴ պատվիրակները և մասնավորապես Պետդումայի խոսնակ Բորիս Գրիզլովը, ով հատկապես դժգոհում էր, թե շատ դրվագներում ՀԱՊԿ անդամ երկրները չեն պաշտպանում Ռուսաստանի դիրքորոշումները: Դժգոհելու առիթ ունեցանք նաև մենք և ափսոսանք հայտնեցինք այն առիթով, որ Լեռնային Ղարաբաղի հարցի հետ կապված ՄԱԿ-ում տեղի ունեցած քննարկումների ժամանակ, մեղմ ասած, մեզ հետ չէին դաշնակից երկրներից շատերը: Մենք ընդգծեցինք, որ ՀԱՊԿ-ն վերջին հաշվով ռազմա-քաղաքական դաշինք է, և նրա անդամ երկրները պետք է ձգտեն համագործակցել ոչ միայն ռազմական պայմանագրերի, այլև քաղաքական շահերի իմաստով: Այս առումով բավականին կարևոր առաքելություն ունեն երկրների խորհրդարանները, որոնք պետք է ժամանակին անդրադառնան և վավերացնեն խնդրո առարկա կառույցի շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերը: ՀՀ ԱԺ-ն, մասնավորապես, վերջերս վավերացրել է յոթ պայմանագիր, որոնք մեկ տարի և երկու ամիս առաջ ստորագրվել էին դեռևս հանրապետության երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կողմից: Այս կարգի պայմանագրերի հաստատման գործընթացի ձգձգումն, ըստ իս, պրոտոկոլային խնդիրների հետ է կապված, բայց, կարծում եմ, շատերն ինձ հետ կհամաձայնեն, որ այնպիսի պայմանագրեր, ինչպիսիք են ՀԱՊԿ անդամ երկրներից որևէ մեկի դեմ ռազմական ագրեսիայի սանձազերծման դեպքում մյուսների գործողությունների, ՀԱՊԿ անդամ երկրների միմյանց հետ հարաբերությունների մշակման, ռազմատնտեսական համագործակցության, խաղաղարար ուժերի մասին համաձայնագրերը պետք է

վավերացվեն առաջին հերթին, որովհետև դրանք բխում են ՀՀ ազգային անվտանգության շահերից:

- Եվ, արդյո՞ք, ՀԱՊԿ ամրապնդմանը չի խոչընդոտում այն իրողությունը, որ ԱՊՀ ոչ բոլոր երկրներն են մասնակից այդ կառույցին: Չէ՞ որ նախապես ծրագրված էր հենց ԱՊՀ հիմքի վրա ստեղծել այդ կառույցը:

- Դա իրոք այդպես է, բայց չպետք է մոռանալ, որ ԱՊՀ երկրներից յուրաքանչյուրն ունի նաև իր առանձին ազգային-պետական շահերը, և հնարավոր չէ, որ միևնույն հարցի նկատմամբ բոլորի մոտեցումները լինեն միանման: Վերջին հաշվով սա Խորհրդային Միություն չէ և ոչ էլ նրա մի տարբերակը: Ընդհանրապես ԱՊՀ-ն և նույնիսկ ՀԱՊԿ-ն, որն ԱՊՀ-ի մեջ ավելի կոնկրետ միավորում է, ռազմա-քաղաքական դաշինքի իմաստով, մի կառույց է, որն իր ներսում մերձեցրել է վեց երկրների: Նրանցից ամեն մեկն իր քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ շահերն ունի, և, հատկապես Հավաքական անվտանգության կազմակերպության առումով, դեռևս ուղիներ են որոնվում, որպեսզի այդ տարբեր շահերը, ռազմական ու քաղաքական դիրքորոշումները հետզհետե մոտեցվեն և համադրվեն: Կփորձեմ մեկ անգամ ևս կրկնել՝ այս ձգտումը բխում է կազմակերպության անդամ բոլոր երկրների շահերից: Առնվազն կույր պետք է լինել՝ չտեսնելու համար, որ մեր տարածաշրջանն առավել զգայուն է նշածս հարցերի նկատմամբ: Կոնկրետ Հայաստանի համար, որ մշտապես գտնվում է թուրք-ադրբեջանական համագործակցության հարվածների տակ, այս կառույցի դերն ուղղակի անփոխարինելի է, և դա արդեն ծանրակշիռ պատճառ է, որ մեր երկիրն ավելի շահագրգիռ լինի ՀԱՊԿ-ի գործունեության ակտիվացման ու ընդլայնման հարցում: Պետք է նկատել նաև, որ կազմակերպության անդամ երկրների հետաքրքրությունների հիմնական ուղղություններից մեկը դարձել է հենց Անդրկովկասը: Դրան նպաստեցին Վրաստանում տեղի ունեցած վերջին իրադարձությունները, որոնք պարզորոշ ցույց տվեցին, որ խախտվում է աշխարհի միաբևեռության սկզբունքը, և գործընթացները կրկին մեզ տանում են դեպի երկբևեռ հավասարակշռություն: Սա լրացուցիչ ազդակ է, որ կնպաստի բարձրացնելու ՀԱՊԿ-ի դերը ոչ միայն մեր տարածաշրջանում, այլև ամբողջ աշխարհում:

- Ինչպես արդեն ասացիք, մասնակից երկրները, կարծես, միակամ չեն այս կամ այն հարցում, այս կամ այն խնդրին առնչվելիս: Ի՞նչ միջոցառումներ են մշակվում ՀԱՊԿ-ի խորհրդարանական մակարդակում այդ անհարթությունները, երբեմն նաև հակասությունները հաղթահարելու համար:

- Խորհրդարանական մակարդակում ՀԱՊԿ անդամ երկրների առավել սերտ համագործակցությանն ուղղված գործողություններն ուղղակի անհրաժեշտ են: Ի տարբերություն կազմակերպության ստեղծման առաջին տարիների, երբ գումարվում էին միայն ՀԱՊԿ-ի խորհրդի նիստեր, այժմ արդեն գործում է ՀԱՊԿ-ի խորհրդարանական վեհաժողով, որը հնարավորություն է տալիս կազմակերպության հետագա զարգացման ու կատարելագործման ուղիներ փնտրել օրենսդրական ոլորտում:

- Պարոն Կարապետյան, ի՞նչ ընդհանրություններ կարող եք նշել, որ ունեն ՀԱՊԿ-ն և նմանատիպ մյուս կառույցները, կարո՞ղ ենք ասել, որ ՀԱՊԿ-ն մի տեսակ հակակշիռ է ՆԱՏՕ-ին:

- Դա, միանշանակ, այդպես չէ: ՀԱՊԿ-ն չի փոխարինում նախկին Վարշավյան պայմանագրին: Սա մի կառույց է, որի անդամ ամեն մի երկիր փորձում է նրա շրջանակներում հետապնդել, առաջ տանել իր ազգային, պետական շահերը: Գաղտնիք չէ, որ ՀԱՊԿ-ի ստեղծումից հետո փորձեր արվեցին նրան հակակշիռներ ստեղծել հետխորհրդային տարածքում: Նկատի ունեմ հատկապես ՎՈՒԱՄ-ը (Վրաստան, Ուկրաինա, Ադրբեջան, Մոլդովա), որը, սակայն, ՀԱՊԿ-ի համեմատությամբ բավականին թույլ կառույց է: Որ ՀԱՊԿ-ն բավականին կայացած կազմակերպություն է, վկայում են նաև նրա անդամ երկրների նախագահների մակարդակով ձեռք բերված բազմաթիվ համաձայնագրերը, որոնք, անկասկած, միջազգային լուրջ փաստաթղթեր են:

Հարցազրույցը վարեց Էդիկ Անդրեասյանը



ՀԱՅԵՐԻՍ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՍԸ

Նորայր ԱԴԱԼՅԱՆ

Արձակագիր, բանասիրական գիտությունների դոկտոր

Ստեր հազարամյա պատմության մայրանում կա մի հարց, որը չի լռում երբեք, ոչ ճակատագրական իրադարձությունների ժամանակ և ոչ իսկ սովորական հանգամանքներում, մշտապես ներկա է, իսկ թե արթուն, մեր հուզաշխարհի ու մտածողության մեջ. ինչպե՞ս գոյատևել պատմության փոշոտ էջերում և պահպանել մեր ազգային ինքնությունը: Հարցն ի սկզբանե է, շարունակական ու անվերջանալի: Նաև այսօր է ամբողջ ձայնով խոսում մեզ հետ՝ ակնկալելով վճռական ու սկզբունքային պատասխան:

«Ով հայ ժողովուրդ, քո փրկությունը քո հավատական ուժի մեջ է»,- ասաց Եղիշե Չարենցը: Նա այս գաղափարը հոչակեց, նկատի առնելով Ավարայրի ճակատամարտը, որտեղ ֆիզիկապես նահատակվեցինք, սակայն տարանք հոգևոր մեծ հաղթանակ, որը ես, հակառակ տարածված մտայնության, չէի համարի «բարոյական», ի՞նչ «բարոյական», երբ մենք պահպանեցինք մեր քրիստոնեական հավատքը, մեր հոգեղեն բնությունը, որի դեմ պարսից արքան մարտնչեց իր ամբողջ կրոնական ու ռազմա-քաղաքական հզորությամբ: Չարենցն այդ ասաց՝ ելնելով նաև Սարդարապատի գլխավոր խորհուրդից, որը և ֆիզիկական, և հոգևոր փրկություն եղավ. Արարատյան դաշտի եկեղեցիների օր-գիշեր հնչող զանգահարումներն ի զեն կոչեցին հայ ժողովրդի հավատական ուժն ու կամքը և նրան հասցրին պատմական հաղթանակի:

Սակայն ցավ ի սիրտ պիտի նշել, որ ժողովրդի կամքի ու մտածողության հավատականությունը ոչ միշտ է դրսևորվել հայոց պատմության մեջ և

չի դարձել հզոր ու կատարյալ ուժ: Այլապես մեծ բանաստեղծը դա չէր բարձրաձայնի նորագույն ժամանակներում. եթե ասել է, ուրեմն դրա պահանջն օդ ու ջրից ավելի անհրաժեշտ է ազգին:

Վահան Թոթովենցը՝ ականավոր գրող, Զորավար Անդրանիկի թիկնապահն ու թարգմանիչը, որին 1938 թվականին գնդակահարեցին «Անգլիայի լրտես» և «նախկին դաշնակցական» մեղադրանքներով, իր հուշապատումներում արձանագրում է Զորավարի նաև հետևյալ դրվագը.

«- Ես ծեր զինվոր մըն եմ և կերթամ դեպի ճակատ՝ մեր հայրենիքը պաշտպանելու համար. ձեզմե ո՞վ կմիանա ինծի,- և առաջարկեց շարքի կանգնել:

Մոտ 2000 հոգի շարքի կանգնեցան, Անդրանիկ իջավ վար, դասավորեց և առաջնորդեց դեպի զորանոց: Մինչև զորանոց 25 հոգի մնացին:

Թքեց Անդրանիկը և հեռացավ դեպի կայարան:

- Փուչ մարդիկ են. այս ժողովուրդը հավաքականորեն չպիտի աշխատի իր ազատության, այլ բուռ մը մարդիկ միայն»:

Հայոց հավաքական միտքը, զգացմունքները ու կամքը մեկ էլ ամբողջ ուժով դրսևորվեցին ազերիների լծից արցախահայության ազատագրական մարտերում, որտեղ և Ավարայր կար, և Սարդարապատ, կա 19-րդ դարի հայոց գրականության (Աբովյան, Նալբանդյան, Մուրացան, Ռաֆֆի) ազատատենչ ոգին: Բոլորս՝ Մայր Հայրենիք թե Սփյուռք, զենքի ու գաղափարի զինվոր դարձանք՝ հանուն մեծ հայրենիքից բռնի օտարված հայրենիքի ու նրա ժողովրդի ազատագրության:

Արդեն 17 տարի լարված-սպասողական խաղաղություն է, որի տակ Բաքուն փորձում է ական դնել՝ ետ նվաճելու հարևանի իրեն չպատկանող հայրենի եզերքը: Դա չպետք է պատահի երբեք, մենք այլևս չենք կարող լուծ կրել, մանավանդ Սումգայիթի, Բաքվի կոտորածներից և Նախիջևանի գիտակցաբար ու հետևողականորեն իրականացված հայաթափությունից հետո, որոնք, ըստ էության, գտնվում են Ցեղասպանության ահեղ շրջանակի մեջ:

Հայերիս Աստվածն ասում է՝ եղիր ազնիվ, ճշմարիտ, սպանություն մի արա, մի գողացիր հարևանի ինչքն ու հայրենի հողը: Մի՞թե ազերիների Աստվածը հակառակն է ասում...

Վերջերս Արցախի հիմնահարցը նոր ալեկոծություն է առրում. հայ-թուրքական ֆուտբոլային հարաբերությունը, երբ նախագահների Մոսկովյան հռչակագիրը, Մինսկի եռյակի և միջազգային այլ կառույցների հայտարարություններն ստեղծել են հուսադրող ու հուսահատ իրավիճակ, երկու կողմերին կոչ անելով փոխզիջումների գնալ՝ արցախահայության ազգային համակողմանի ինքնորոշման հումանիտարական իրավունքը ստորադասելով Ադրբեջանի տարածքային ամբողջականության (բռնազավթված ամբողջականություն) խաղաղային քաղաքական սկզբունքին:

Պետք է լրջորեն մտահոգվենք, քանզի սա առրողներիս խնդիրը չէ միայն, այլև առաջա սերունդների, լսենք նրանց հայրենանվեր ձայները, ներկայիս մեր հավաքականության մեջ նրանք էլ կան:

Ի՞նչը զիջենք: Հայրենի Արցա՞խը: Նրա ժողովրդին դարձնենք «ամբողջականության» զո՞հ, ինչպես պատահեց հայկական Նախիջևանում: Սակայն, ինչ ասել կուզե, զիջել անհրաժեշտ է՝ վերջնական ու կայուն խաղաղության հասնելու համար և ազերի ժողովրդի հետ հաստատելու քաղաքակիրթ, բարի-դրացիական հարաբերություններ: Եվ Հայաստանն այդ զիջումն արել է ազգովին ու պետականորեն՝ Արցախը չի միացրել իրեն, թողել է, որ նա ինքնուրույնաբար ինքնուրույնանա, և առայժմ պաշտոնապես չի ընդունել նրա անկախ ու ինքնիշխան պետականությունը ներկա սահմաններով: Սա քաղաքական մեծ զիջում է՝ միջազգային ծանրակշիռ ձևով ու բովանդակությամբ:

Նոյեմբերի 20-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ մի քանի տասնյակ կուսակցությունների և հասարակական-քաղաքական կազմակերպությունների ղեկավարների խորհրդակցություն՝ «Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը խաղաղ կարգավորելու գործընթացը» հարցի շուրջ, որը շարունակական է լինելու: Այսօր սա մեր ազգային պայքարի ուժն ու միասնականությունն արթնացնելու կարևոր քայլ է, որին, համոզված եմ, կհետևեն նորերը: Մեր առջև ծառացած մարտահրավերի դեմ համայն հայ ժողովուրդը պետք է համախմբվի անհրաժեշտաբար ու ներկա ժամանակի թելադրանքով, Մայր Հայրենիքում և ի սփյուռս աշխարհի:



ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ

Ֆելիքս ՄԵԼՈՅԱՆ

Գրականագետ, «Նորք» հանդեսի գլխավոր խմբագիր

Մեզ ջադու են արել, մեր մտքերի վրա անեծք կա: Պիտի որ լինի, թե չէ դուրս է գալիս, որ ժողովուրդ չենք, անհայրենիք մարդկանց մի ցեղ ենք՝ սրանցում հողում բնավորված: Ոչ էլ համախոհ ու միաբունչ ենք, ինքներս մեր մեջ մենք ու նրանք ենք. մենք, ինչ ասելու բան է՝ հայաստանցիներս ենք, նրանք էլ՝ ղարաբաղցիներն ու սփյուռքահայերը: Բոլորս ցավատեր, բոլորս հոգսաբաս՝ ամեն մեկս իր բանուգործին. ցեղասպանությունը ճանաչել տալը սփյուռքահային, թուրքի լամուկներից յախան պրծացնելը ղարաբաղցուն, մեզ էլ մեր խորհրդային անցյալի ու ժողովրդավարական ներկայի գիրկընդխառն մղձավանջը: Այսինքն թե՝ մեր ճակատագիրը, մեր անցյալն ու ապագան, մեր բաժին ասված՝ ջոկ, նրանցը՝ ջոկ:

«Մայնդորֆյան հռչակագրի տակ չկա Ղարաբաղի ստորագրությունը»,- սա մեզանում ընկալվում է որպես փորձագետի նուրբ դիտարկում, իսկ որպես մեղադրանք այնքան բնական է հնչում, ասես հակամարտությունը, որպես կանոն, եռակողմ է լինում և ոչ թե՝ երկկողմ: Ճիշտ է, Ղարաբաղի ստորագրությունը չկա: Բայց որ չկա՝ ի՞նչ: Ո՞րն է այն էականորեն կարևորը, որ աչքաթող ենք արել ու հիմա մեզ ներում չկա: Իսկ եթե Ղարաբաղի ստորագրությունը լիներ և չլիներ Հայաստանինը: Էլի՞ սխալ է: Ինչ է՝ և Հայաստանինը պիտի լիներ, և Ղարաբաղինը, որ Ադրբեջանը հասկանար, թե մենք նույն ժողովո՞ւրդն ենք: Հասկացնել էինք տալու ու չե՞նք տվել: Իսկ քանի դեռ խաբար չէ, պատրաստ է ղարաբաղցիների հետ մի պայմանագիր կնքել, մնացած հայերիս հետ մեկ ա՞յլ, ղարաբաղցիների հետ թուրքվանք է, մնացածներիս հետ ջանջիգյա՞ր...

Դիվանագիտություն ասվածը երևի թե թուրքի համար փեբակ է, մեր համար՝ չէ: Առայժմ որ՝ չէ: Եվ ոչ այն պատճառով, որ այդ հմտության մեջ խաբելն էլ է մտնում, իսկ մենք խաբել չգիտենք: Գիտենք, միայն թե առայժմ մենք մեզ ենք խաբում, առայժմ մեր դիվանագիտությունը միայն մեր հողում է ծաղկում, և պտուղները շատ դառն են:

Ասում ենք՝ Ղարաբաղի հարցի պատասխանը ղարաբաղցին պիտի տա, ինչ որոշեց՝ մենք հոժար ենք: Այնպես ենք ասում, որպես թե խորը թաքցրած դիվանագիտություն ենք բանեցնում. հակառակորդը պիտի խաբվի, պիտի միամտվի ու մտածի, թե մենք հակամարտող կողմ չենք, ժողովրդավար ենք ու ժողովրդավարի կեցվածքին վայել խաղաղարար, թե ընդամենը Ղարաբաղի անվտանգությանը հետամուտ Եվրախորհրդարան ենք: Իսկ եթե ավելի շատ խաբվեց, կկարծի, թե ղարաբաղցու ճա-

Շուշի

կաստգրի նկատմամբ Պիղատոս ենք: Ղարաբաղն էլ իրեն արժանապատիվ սուբյեկտ կզգա, որ իր գլխին մենք մեզ դատավոր չենք կարգել, քավոր ենք մնում ենք մեր քավորությանը:

Որ տեր ու ծառա հասարակություն ենք, որ ընչաքաղցությունից, կողոպուտից, ծեծուջարդից ու մարդավայել կյանքի անձկությունից աչք չենք բացում՝ առօրյա է, ճարահատ վարժվում ենք: Բայց որ հրապարակները, մամուլն ու հեռուստատեսությունը ողողվեն մարգարեներով, գուշակներով, աճպարարներով ու լարախաղացներով, անցավ բարբաջեն, հոխորտան ու ժողովրդավարական թամաշաներ սարքեն՝ անընտել վիճակ է: Ախր կռվի վերջը դեռ չի երևում, ախր մեր դրկիցներն իրենց նենգությունն առած դեռ չեն քոչել Մարս ու Վեներա: Մեր ծանր հոգսը մեր ցնքից կախ, մեր վաղվա օրը վտանգված՝ ինչո՞ւ ենք այսքան անդարդ: Ինչպես ենք կարողանում ասել, թե Ղարաբաղը ինչ որոշման գա՝ մենք համաձայն ենք: Այդ ինչպե՞ս ենք համաձայն: Չլինելու բան է, բայց եթե, ասենք, Ղարաբաղը որոշի մնալ Ադրբեջանի կազմում, էլի՞ համաձայն ենք: Եթե՝ այո, մեր այս դիրքորոշումը դավաճանություն չէ՞ ղարաբաղցիների նկատմամբ: Իսկ մե՞ր նկատմամբ: Որ մեր բեռը թեթևացավ, որ ազատվեցինք ամեն տեսակի շրջափակումներից՝ էլ դավաճանած չե՞նք լինի ինքներս մեզ: Ասես այն կարծիքին չե՞նք, թե այս մեղավոր երկնքի տակ բոլոր հայերս շղթայված ենք մեկ-միասնական ճակատագրով, թե Ղարաբաղը տալով կվտանգենք նաև Զանգեզուրն ու Հայաստան աշխարհն ընդհանրապես:

Ոչ Ղարաբաղն է իր խաչելությունն ու հարությունը ծրագրած Քրիստոս, ոչ էլ մենք ենք հռոմեական կուսակալ Պիղատոս, որ ձեռքներս լվանանք: Եվ եթե նույնիսկ այս ամենը սոսկ անհոգ սեթևեթանք ու վաղանցիկ սիրախաղ է ընտրյալ ժողովրդավար եվրոպացու առաջ, դարձյալ տեղին ու ժամանակին չէ: Ուզվում-պահանջվում է, որ գոնե այս անգամ մեր քաղաքական այրերը միակամ լինեն, չքաշվեն միջկուսակցական խարդավանքների մեջ, հետո էլ գան փողկապավոր թափահարվեն ամբիոնների առաջ ու փորձեն համոզել, թե իրենք էլ կուսակցական տեսակի հայրենասեր են: Թող որ հազարապատիկ ճշմարիտ է, թե ժողովրդավարությունը անվտանգության գրաի է, բայց ճշմարիտ է և այն, որ թշնամու աչքում ժողովրդավար հայը ավելի ահարկու ու զորեղ չէ, քան իրականում իր էությունն է: Մենք մերն ասենք, մեր ասելիքը չմիջնորդավորենք ու չպայմանավորենք Ղարաբաղի որոշմամբ, քանզի անվտանգության երաշխավորն ենք ոչ միայն ղարաբաղցի մեր եղբոր, այլև ինքներս մեր: Ճիշտ է, Ղարաբաղը ղարաբաղցու տունն է, վաղը ինքն է էլի քթքթալու այդ հողի վրա, բայց եթե իրողություն է և ոչ ուրաճմլիկ երազանք, թե աշխարհում սփռված ինը միլիոն ենք, ինչո՞ւ պիտի ինը միլիոնի ճակատագիրը որոշի հարյուր կամ հարյուր հիսուն հազարը: Սա այն վճիռն է, որի կայացմանը պիտի մասնակցի և հայաստանցի, և լոսանջելեսցի, և կրասնոդարցի հայը: Բոլոր հայերս:

Ղարաբաղյան հիմնահարցի վերաբերյալ մեր կարծիքը ավելի շուտ մեզ է բնորոշում, քան ղարաբաղյան հիմնահարցը: Եվ ճակատագրորեն դժվարին այս խնդիրը լուծվելու է ոչ թե մերձիմտս մեր դատողություններով, այլ ժողովրդի՝ գոյատևության ու մաքառումի առողջ բնազդով:

Կճանաչի՞ արդյոք նոր նախագահը Հայոց ցեղասպանությունը



Արմինե Ամիրյան

Սա մի հարց է, որի վերաբերյալ մոտեցումները միանշանակ չեն ոչ ԱՄՆ-ի և ոչ էլ նրա դաշնակիցների համար: Նախընտրական քարոզարշավի ընթացքում մի քանի անգամ Օբաման բարձրաձայնեց Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտության մասին: Նախագահի հանրապետական թեկնածուն գերադասեց այդ հարցին մեկ տարվա ընթացքում ընդհանրապես չանդրադառնալ: Թուրքիայի հետ հարաբերությունները հանրապետականների համար միշտ էլ անվիճելի առաջնահերթություն են եղել: Ինչևէ, հավանաբար սա էլ պատճառներից մեկն էր, որ Թուրքիայի իշխող վերնախավը ցանկանում էր Սպիտակ տան ղեկավարի աթոռին տեսնել հանրապետական, այլ ոչ թե դեմոկրատ նախագահ: ԱՄՆ-ում Հայոց ցեղասպանության խնդրի շուրջ դիրքորո-



շումների հստակեցման ու նոր դաշնակիցների հայտնաբերման համար դիվանագետների ամենաբարձր մակարդակով գործուղումները Անկարայից Վաշինգտոն սկսվեցին ընտրություններից տասը օր առաջ: Առաջնային հանդիպումները նախագահի երկու թեկնածուների՝ Օբամայի և Մակքեյնի հետ էին: Ըստ էության Անկարան ցանկանում էր հստակ ուղերձ հղել նոր վարչակազմի հիմնական դերակատարներին առ այն, որ Թուրքիան իր բոլոր խնդիրներով հանդերձ պետք է դուրս չմնա նոր վարչակազմի ուշադրությունից և պետք է շարունակի դիտարկվել որպես խիստ ռազմավարական գործընկեր: Նախագահի դեմոկրատ թեկնածուն, ի տարբերություն հանրապետականի, հայանպաստ խոստումներով առաջին տեղում է: «Թուրքիան Հայաստանին չի դիտարկում որպես սպառնալիք կամ թշնամի, և այդ երկրի հետ հարաբերությունների կարգավորման հույս ունի»,- համոզված է Թուրքիայի վարչապետի արտաքին քաղաքականության գծով խորհրդական Ահմեդ Դավութօղլուն: Միաժամանակ նա նշում է, որ պաշտոնական Վաշինգտոնի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը կվնասի թուրք-ամերիկյան հարաբերու- թյուններին և բացասաբար կանդրադառնա Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորմանն ուղղված Թուրքիայի ջանքերի վրա: Իսկ թուրքական իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության ներկայացուցիչ Սուատ Քինիքլիօղլուն, պատասխանելով այն հարցին, թե ինչպիսին կլինի Անկարայի արձագանքը ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման դեպքում, ասել է. «Թուրքիան կմոռանա գործընկերության մասին»: Պաշտոնական Անկարայի սպառնալիքների լեզուն ոչ ներսում և ոչ էլ դրսում այլևս նորություն չեն:

Ընտրություններից մի քանի օր անց, Էրդողանը շտապեց հայտարարել, որ ԱՄՆ-ի վարչակազմի փոփոխությունները չեն անդրադառնա թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա: Թուրքիայի վարչապետը համոզված է, որ երկկողմ հարաբերությունների հիմքում ընդհանուր մարտավարական շահերն են: Էրդողանը նաև համոզված է, որ Օբաման չի ճանաչի Հայոց ցեղասպանությունը: «Մենք պետք է առանձնացնենք նախընտրական պայքարի հռետորությունն ու խոստումներն իրականությունից: ԱՄՆ-ի ուսերին ընկած է այլ երկրների նկատմամբ պատասխանատվության մեծ բեռ: Օբաման նախագահ դարձավ գլոբալ ճգնաժամի ժամանակ, և նա պետք է պայքարի դրա դեմ»,- ընդգծել է Թուրքիայի վարչապետը:

ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախումբը շնորհավորելով Բարաք Օբամային ԱՄՆ-ի նախագահական ընտրություններում հաղթելու կապակցությամբ, հույս է հայտնել, որ Օբամայի հաղթանակը նոր և լուրջ հնարավորություն է տալիս Վաշինգտոնին՝ պաշտոնապես ճանաչելու Հայոց ցեղասպանությունը և ամրապնդելու հայ-ամերիկյան հարաբերու-թյունները: «Բարաք Օբամայի և փոխնախագահ Ջո Բայդենի հաղթանակը սկիզբ դրեց ԱՄՆ-ում ակնկալվող փոփոխություններին: Մեր անցկացրած հարցումները ցույց են տվել, որ ԱՄՆ-ի հայ համայնքի 80-85 տոկոսը նախագահական ընտրությունների ժամանակ իրենց ձայնը տվել է դեմոկրատ թեկնածու Բարաք Օբամային»,- հայտարարել է ANCA-ի նախագահ Քեն Խաչիկյանը: Նրա խոսքերով, Ամերիկայի նախագահական ընտրությունները ցույց տվեցին, որ Ամերիկայի հայ համայնքը կշիռ ունեցող ընտրազանգված է: Ի տարբերություն այլ թեկնածուների, Բարաք Օբաման խոստացել է նաև ապահովել Հայաստանի անվտանգությունը՝ վերջ տալով Թուրքիայի և Ադրբեջանի կողմից հայկական սահմանների շրջափակմանը, ինչպես նաև ջանքեր գործադրել ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար, որի հանգուցալուծումն, ըստ Օբամայի, պետք է ընդունելի լինի հակամարտության բոլոր կողմերի համար և հիմնվի ժողովրդավարության ու ազգերի ինքնորոշման իրավունքի վրա:

Կօգտագործի արդյո՞ք ցեղասպանություն բառը Օբաման, ցույց կտա ժամանակը, միայն հիշեցնենք, որ Կոնգրեսը երկու անգամ՝ 1975-1984 թթ. բանաձևեր է ընդունել Հայոց ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ: Իսկ 1981 թվականին նախագահ Ռեյգանը իր ամենամյա ուղերձում հիշատակել է Հայոց ցեղասպանությունը:



Թուրքիան պատրաստվում էր դեսանտ իջեցնել Թեհրանում

Տիգրան ԴԱՎԹՅԱՆ

Այս օրերին իսլամական հեղափոխության երեսունամյակի առիթով Իրանի մամուլում հաճախ կարելի է հանդիպել հուշագրությունների, որտեղ վեր են հանվում երկրի վերջին տարիների կարևոր անցուդարձերը և պատմության չբացահայտված էջերը: Օրերս «Շահրվանդե էմռուզ» պարսկալեզու շաբաթաթերթի 8 նոյեմբերի 2008-ի թիվ 71 համարի «Դիվանագիտական հուշեր» սյունակում հանդիպեցինք հետաքրքիր մի բացահայտման, որը վերաբերում է հայերի կողմից 24 ապրիլի 1981-ին Իրանում, Թուրքիայի դեսպանատան մոտ կազմակերպված ցույցերին: Հուշերի հեղինակը օրվա վարչապետ և արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ռաջայիի օգնական Մոհամադ Սադրն է:

Իրանում Թուրքիայի դեսպանատան մոտ հայերի կողմից ցույցեր կատարելու և քաղաքում երթեր կազմակերպելու երևույթին մենք հիմնականում հանդիպում ենք Իրանի հեղափոխությունից հետո: Թեհրանի հայերի 1981-ի ապրիլի 24-ի երթը իր տեսակի մեջ երրորդն էր, որը սկիզբ առավ Սբ. Սարգիս եկեղեցուց՝ կրոնական արարողությունից հետո և հասավ մինչև Թուրքիայի դեսպանատուն: Ոստիկանությունը փորձում էր Իստամբուլ կոչվող խաչմերուկը փակելով երթը հունավորել դեպի Սբ. Աստվածածին եկեղեցի, որտեղ և, ըստ սովորության, ավարտվում էր միջոցառումը և ընթերցվում օրվա բանաձևը: Այդ օրը երիտասարդները պատռեցին ոստիկանության շղթան և մոտեցան դեսպանության պարիսպներին, մի քանիսը մտան շենքի բակ և վառեցին Թուրքիայի դրոշը:

Հոդվածագրի վկայությամբ՝ այդ օրը վարչապետը շտապ կերպով ընդունել է Թուրքիայի դեսպանին՝ վերջինիս խնդրանքով: Սադրը հայության մասին հարգալից մի նախաբանից, Ի-

ռանի երիտասարդ հեղափոխության ներքին և արտաքին բազում մարտահրավերները և Թուրքիայի հետ ունեցած հիմնահարցերը վերլուծելուց հետո հայտնում է, թե «Թուրքիայի դեսպանը հանդիպման ընթացքում ցանկացավ իր կառավարության խոսքը հայտնել գրավոր, և դա նշան էր այն բանի, որ պատգամն ունի խիստ ոճ»:

Թուրքիայի կառավարությունը արարողակարգային ընդունված խոսքերից հետո հայտնում էր. «Եթե Իրանի կառավարությունը անզոր է դեսպանության շենքից հեռացնել տեռորիստներին, ազատել պատանդներին և ապահովությունը վերականգնել, մենք հայտնում ենք, որ մեր կոմանդոների հատուկ ջոկատը, Անկարայում ինքնաթիռի մեջ նստած, միայն Ձեր համաձայնությանն են սպասում Թեհրան թռչելու և դեսպանատունը ազատելու համար»:

Հոդվածագիր Սադրը շեշտում է, որ պատգամը շատ վիրավորական էր Իրանի համար, և անհրաժեշտ էր, որ վարչապետը մի այնպիսի պատշաճ պատասխան տար, որ թե երկրի հեղինակությունը բարձր մնար և թե հարևան երկիրը այլևս նման ոճով չխոսեր: Ռաջային հարգանքով հիշեցնում է դեսպանին, որ նման հանդիպման կազմակերպման համար դիվանագիտական արարողակարգը նվազագույնը տասը օր է նախատեսում, բայց իրենք, ելնելով երկու երկրների միջև գոյություն ունեցող բարի դրացիական հարաբերություններից, դեսպանին ընդունել են երկու ժամվա ընթացքում: Ապա վարչապետը շարունակել է. «Մեր երկրում հեղափոխություն է տեղի ունեցել և իրանահայերը ևս մյուս իրանցիների նման իրավունք ունեն արտահայտելու իրենց տեսակետները: Անշուշտ մենք պատասխանատու ենք օտարերկ- րյա դիվանագիտական ներկայացուցչությունների անվտանգության համար և հարկ եղած նախատեսությունները ևս արել ենք, բայց հայ ցուցարարների նման մեծ քանակ չէինք պատկերացնում և նրանք, առիթից օգտվելով, ներխուժել են Ձեր դեսպանություն և հիմա ոստիկանությունը զբաղված է նրանց դուրս մղելու աշխատանքով»:

Այնուհետև Սադրը շարունակում է. «Վարչապետի ելույթի ժամանակ անընդհատ ընդունարան էր մտնում ու դուրս գալիս անվտանգության հարցերով խորհրդական Խոսրով Թեհրանին և հայերի ցույցի վերաբերյալ հայտնում վերջին լուրերը: Վերջապես նա մի երկտող է դնում վարչապետի սեղանին և պրն. Ռաջային ելույթի ավարտին հայտնում է, թե բոլոր հայերը դեսպանատան տարածքից տարհանվել են և միջադեպն ավարտված է»:

Վարչապետ Ռաջային վերջում ակնարկելով թուրքական դեսանտի խնդիրը, հայտնում է դեսպանին, որ ինքը նման առաջարկ չի լսել:

ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆԻ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Բանալ ոչ առաջ,
քան 1982 թուական,
իմ ծննդեան տարին.

ՍԻՄՈՆ ՎՐԱՑԵԱՆ

Այսպէս գրած է Վրացեան կողմին վրայ խսսորէն փակուած այն ծրարին, որ կը պարփակէ մեծ ու վաստակաշատ հայուն օրագրութեանց մէկ մասեանը,- կաղոյս կազմով բաւական մեծկակ տետր մը:

1982 թ. (Մարտ 24) ոիտի լրանար իր ծննդեան 100-ամեակը:

Օրագրիւնը կը սկսի Նիւ Եորք 1946 թ. Հոկտ. 26-ին եւ ընդհատաբար կը շարունակուի յաջորդող տարիներուն վրայ, դառնալով աւելի կանոնաւոր, գրեթէ օրը օրին 1956 թ. Յունուար 1-էն մինչեւ 1960 թ. Յուլիսը (Պէյրութ):

Գրառումներուն մէկ մասը անշուշտ մտերմական բնոյթ ունի՝ կապուած իր անձնական կեանքին, բայց մեծագոյն մասը կը շօշափէ ազգային, քաղաքական, մշակութային եւ կրթական հարցեր. վերջինները առնչուած են Պէյրութի Նշան Փալանճեան ճեմարանին, որուն տնօրէնութիւնը վարելու կոչուած էր Վրացեան 1952 թ. Յունուարէն ի վեր:

Ընթերցողի ուշադրութեան կը յանձնուի այսօր այդ օրագրութեան սկիզբը դրուած Ս. Վրացեանի ինքնակենսագրութիւնը, որ ի մի բերուած են իր գրական եւ հասարակական բեղմնաւոր գործունէութեան գլխաւոր իրագործումները, հակիրճ տողերով բայց փաստացի եւ ըստ կարելւոյն՝ ամբողջական, որովհետեւ 1960 թ. այս գրառման յաջորդող 9 տարիներուն, հակառակ յառաջացած տարիքին եւ տեսողութեան ու առողջութեան վատթարացման, ան շարունակեց, կարելի է ըսել նախկին թափով, իր ստեղծագործական կեանքը՝ նորանոր հասորներու լոյս ընծայումով:

Այս ինքնակենսագրութիւնը, զոր ուրիշ տեղ մը Վրացեան կը կոչէ «Իմ կեանքի ուղին», կը սկսի «Միրելիդ իմ Մ...» խօսքերով: «Մ.»-ը անծանօթ է մեզի. կրնայ նաեւ ուղղուած ըլլալ ոչ յատուկ հասցէի մը...

Ե. Փ.

Կամաց-կամաց, ժամանակի ալիքների հետ սահում եմ վար, մինչեւ որ յաւիտենապէս քնեմ նախահայրերիս հետ:

ՋՈՐՋ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ,

Կեանքի վերջերը, Փոքոմաքի եզերքին:

- Իմ յաւիտենապէս քնելու ժամանակն էլ մօտենում է, բայց աւա՜ղ, ես չեմ կարող քնել նախահայրերիս հետ...

Ս. ՎՐԱՑԵԱՆ

1964, Մարտ 24

Սիրելիդ իմ Մ...

Այսօր իմ ծննդեան տարեդարձն է: Կատարում եմ խնդիրդ եւ ահա գրում եմ քեզ համար curriculum vitae-ն:

Ես ծնուել եմ 1882 թ. Մարտ 24-ին, Նոր-Նախիջեւանի շրջանի Մեծ Սալա գիւղում: Հայաստանից տարագրուելուց յետոյ, մեր Թեհրանի դեսպան Յովսէփ Արղութեանը ինձ համար անցագիր պատրաստելիս սխալմամբ ծննդեան տեղս նշանակել էր տուել Երեւան. հետագային այդպէս էլ մնաց. բոլոր թղթերիս մէջ ծննդեան վայրս նշանակուած է Երեւան:

Մեր ընտանիքի եւ մանկութեան մասին կարելի է տեղեկութիւն ունենալ իմ «Կեանքի ուղիներով» հատորից: Նոյն գրքի երկրորդ հատորից, որ, յուսամ, լոյս կը տեսնի յառաջիկայ ամառ, կարելի է տեղեկութիւն ստանալ իմ պատանութեան եւ ստացած կրթութեան մասին:

Նախնական ուսումս ես ստացել եմ Քուբանի կազակների Տիմաշովկա ստանիցայում, ապա Մեծ Սալայի տղայոց ծխական դպրոցում, ապա Նոր-Նախիջեւանի Սուրբ Համբարձման ծխական դպրոցում, ապա 1900-1906 թ. Էջմիածնի Գէորգեան ճեմարանում, որի լսարանական մասն եմ աւարտել: Ապա՝ Պետերբուրգի համալսարանի իրաւագիտական բաժնում եւ մանկավարժական Բարձրագոյն Ճեմարանում:

1899-ին մտել եմ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը, եղել աշակերտական խումբի անդամ: 1903-1906, եղել եմ Գէորգեան ճեմարանի դաշնակցական կազմակերպութեան նախագահ: 1906-7 թ. եղել եմ Նալբանդի* Կենտ. Կոմիտէի անդամ եւ գործիչ-շրջիկ: 1907-ին մասնակցել եմ Հ. Յ. Դ. Չորրորդ Ընդհանուր Ժողովին, Վիեննայում: 1908-ին եւ 9-ին մասնակցել եմ Հ.Յ.Դ. Կովկասի Ռայոնական ժողովներին, Թիֆլիսում եւ Բագուում:

Հետաքնդրուելով Հ. Յ. Դաշնակցութեան գործով ցարական կառավարութեան կողմից՝ 1910-ին անցել Պոլիս եւ Պոլսից Կարին (Տե՛ս «Կեանքի ուղիներով» Ա. եւ Բ. հատոր): Պոլսից անցել եմ Կարին, որ մի տարի վարել եմ «Յառաջ»ի խմբագրութիւնը եւ քաղաքացիութիւն ու մանկավարժութիւն եմ աւանդել Սանասարեան մանկավարժական դասընթացքում եւ Հայոց պատմութիւն՝ Հռիփսիմեան Օրիորդաց դպրոցում:



Վրացեանը և Բալայանը

1911 թ. աշնան մեկնել եմ Ամերիկա՝ «Հայրենիք»-ի խմբագիր եւ գործիչ: Ամերիկայում մնացել եմ 1911 թ. Նոյեմբերի վերջից եւ մինչեւ 1914 թ.: Մայիսի վերջերը, երբ մեկնել եմ Եւրոպա, Պոլիս եւ Կարին, իբրեւ Հ.Յ.Դ. 8-րդ Ընդհ. Ժողովի պատգամաւոր Ամերիկայի շրջանի կողմից: Ընդհանուր Ժողովում ընտրուել եմ Հ. Յ. Դ. Հայաստանի Բիւրոյի անդամ:

1914 թ. Օգոստոսին, թուրք կառավարութեան կողմից արտաքսուել եմ Կովկաս, ուր, իբրեւ Բիւրոյի անդամ, մասնակցել եմ կուսակցական եւ հանրային կեանքին: Նշանակուել եմ հայ Կամաւորական խմբերի կարգադրիչ մարմնի անդամ եւ ներկայացուցիչ Ազգ. Բիւրոյում:

Մասնակցել եմ 1916 թ. Պետրոգրադի Հայկական Համագումարին:

1916 թ., կամաւորական խումբերի հաշուեյարդարից յետոյ, իբրեւ զօրակոչի ենթակայ, մերժելով մտնել Սղայական վարժարանը, իբրեւ հասարակ զինուոր, մտել եմ 118-րդ պահեստի զօրագունդը Թիֆլիսում:

1917 թ. Փետր. 28-ին տապալուեց ցարական կառավարութիւնը: Յաջորդ օրը ես թողի զինուորութիւնը եւ նորից մտայ զործօն հասարակական կեանքի ասպարէզ: Կուսակցութեան կողմից նշանակուեցի «Հորիզոն» օրաթերթի խմբագիր, Թիֆլիսի Յեղափոխական Կենտրոնի անդամ, Յեղափոխական Կենտրոնին կից հակայեղափոխականների դէմ ինքնիշ իրաւաբանական յանձնախումբի անդամ: Մասնակցեցի Հ. Յ. Դ. Կովկասի Ռայոնական ժողովին: Իբրեւ կովկասեան-զիւղացիական խորհրդի անդամ, 1917 թ. Մոսկուայի Պետական խորհրդակցութեան պատգամաւոր: 1917 թ. Սեպտեմբերին Ռուսահայոց ազգային խորհրդաժողովի պատգամաւոր: Կովկասեան Սէյմի անդամ: Սէյմի կողմից ներկայացուցիչ Սարդարաբեկի ճակատում: Հաշտարար Պատուիրակութեան անդամ Սէյմի կողմից թուրք-կովկասեան Բաթումի խորհրդաժողովում 1918 Մայիսին:

Գործօն դեր Հայաստանի անկախութեան հռչակման գործում: Հայաստանի Խորհրդի կողմից պատուիրակ Կամաւորական Բանակի մօտ Եկատերինէում եւ Ռոստովում 1918 թ. ամառը:

1918 Հոկտ. Երեւան Ժողովրդական կուսակցութեան ներկայացուցիչների հետ՝ դաշնակ-ժողովրդական կոալիցիոն կառավարութեան հեղինակներից մէկը:

Հայաստանի խորհրդի անդամ:

Կուսակցական թերթի եւ «Հայկոռոդ» թերթի խմբագիր:

Հայաստանի խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի նախագահ:

Երեւանի քաղաքային խորհրդի անդամ: Երեւանի փողոցների հայացման յանձնախմբի նախագահ: Աղստաֆեան ոռոռտան ես եմ վերանկրտել Աբովեան անունով:

1919 թ. ամառը Հայաստանի խորհրդարանի ընտրական յանձնախմբի նախագահ: Ես եմ կազմել դաշնակցական պատգամաւորների ցանկը, որ Բիւրոյի կողմից հաստատուեց:

Հ. Յ. Դ. Բիւրոյի օրգան Երեւանի «Յառաջ» օրաթերթի հիմնադիր եւ խմբագիր:

Արեւմտահայ Համագումարում ներկայացուցիչ Բիւրոյի կողմից:

Հայաստանի խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի նախագահութեան անդամ Ա. Ջամալեանի եւ Սահակ Թորոսեանի հետ: Հ. Յ. Դ. 9-րդ Ընդհանուր Ժո-


Աստաֆյան փողոց

ղովում ներկայացուցիչ եւ զեկուցաբեր Բիւրոյի կողմից. ծրագրային եւ կանոնագրի վերամշակման յանձնախմբի անդամ: Վերընտրուեցի Բիւրոյի անդամ:

Նախագահ կուսակցական եւ կառավարական յանձնախմբի՝ Պօղոս փաշայի ղատուիրակութեան հետ բանակցելու:

1920 թ. Յունուար՝ մասնակցութիւն համալսարանի հիմնադրութեան:

Գիւղատնտեսութեան, Պետական գոյքերի եւ աշխատանքի նախարար Խ աշխատանքի դահլիճում:

Բոլշեւիկեան մայիսեան ապստամբութեան միջոցին Բիւրոյի կողմից ղրոպագանդի վարիչ: Բոլոր կոչերը եւ յայտարարութիւնները գրուած են իմ ձեռքով:

Բիւրո-կառավարութեան անդամ:

Հայ-թուրքական ղատերազմին՝ կառավարութեան կողմից ներկայացուցիչ Կարսի ճակատում Արս. Բաբալեանի հետ:

Կարսի անկումից եւ Բիւրո-կառավարութեան հրաժարականից յետոյ վարչապետ եւ արտաքին գործոց նախարար:

Հայաստանի խորհրդայնացումից յետոյ, Դեկտ. 2-ին, մնացի Երեւանում, իբր Հ. Յ. Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Երկրում:

Փետր. 18: Հայրենիքի փրկութեան կոմիտէի նախագահ: Պատերազմի ղեկավարութիւն բոլշեւիկների դէմ:

1921 թ. Ապրիլ 2-ին հեռացանք Երեւանից դէպի Լեռնահայաստան: Հայաստանը նորից Յեղկոմի իշխանութեան ներքեւ:

Պայքար Լեռնահայաստանում: Թաւրիզ եւ վերադարձ Զանգեզուր:

Զանգեզուրի իրադարձությունները: Հայրենիքի փրկութեան ուժերը Յուլիս 10-ին ընդմիշտ հեռացան Զանգեզուրից դէպի Պարսկաստան:

Թաւրիզը՝ տարագրութեան կենտրոն:

Պարսից ռավարութեան «խնդրանքով», 1921 թ. աշնան հեռացայ Թաւրիզից: Երկու ամիս Թեհրանում: Լ. Շանթի, Յ. Քաջազնունիի, Յ. Տէվէճեանի հետ օրմոմոիլով մեկնեցի դէպի Եւրոպա:

Երկու ամիս Բաղդադում:

Երկու շաբաթ Բասրայում:

Երկու շաբաթ Բոմբէում:

Երկու շաբաթ Եգիպտոսում:

Երկու շաբաթ Պոլսում:

Պոլսից՝ Բելգրադ. Բելգրադից Փարիզ, ուր մասնակից եղայ Հ. Հ. ղատուիրակութեան աշխատանքներին:

1923-ին կուսակցութեան Վիեննայի Խորհրդաժողովում՝ ընտրուել եմ Պատասխանատու Մարմնի անդամ: Լոզանի մռայլ օրեր:

1924 թուականը Ժընեւում, Պատասխանատու Մարմնի մէջ: Ճամբորդութիւններ Փարիզ, Բուլգարիա, Ռումանիա, Փրագա եւայլն:

1925 թուականից՝ Փարիզում. Հ. Յ. Դ. 10-րդ Ընդհ. Ժողով: Դրոն գալիս է Մոսկուայից: Ընտրում եմ Բիւրոյի անդամ:

Վրացեանը և Դրօն




Նիկոլ Աղբալյան

«Դրօշակ»ը վերակսւում է հրատարակուել, որի խմբագիր՝ Ա. Ջամալեանի հետ, բայց փաստօրէն մենակ:

1928-ին լոյս է տեսնում իմ «Հայաստանի Հանրապետութիւնը»:

Հիմնում Հայ Նահատակ Գրագէտների Բարեկամների Միութեան:

Փարիզի Հայ գրական ակումբը:

Ճամբորդութիւն Ամերիկա 1930-ին, 8 ամսով, Բիւրոյի կողմից - Ռ. Դարբինեանի հարց, հրական գործ եւայլն:

Մարկոցային շարժում:

Հ. Յ. Դ. 11-րդ Ընդհ. Ժողով: Ռուբէնի դաւերը: Մերժում եմ ընտրուել Բիւրոյի անդամ: Ռուբէն-Նաւասարդեան-Համօ եռապետութիւն:

«Վէմ» երկամսեայ հանդէս պատմութեան եւ մշակոյթի:

1936-ին՝ Հիւսիսային Ամերիկա Կենտր. Կոմիտէի հրաւէրով եւ Հ. Յ. Դ. Բիւրոյի սիրոմամբ: Շրջագայութիւն Ամերիկայում եւ Քանադայում՝ Ատլանտեանից Խաղաղական:

Ամերիկա՝ երկու տարով, բայց պատերազմի պատճառով չկարողացայ վերադառնալ Եւրոպա:

Պատերազմի տարիներ:

Հայ Դատի Յանձնախումբի անդամ 1945-1947:

Սան Ֆրանսիսկոյի միջազգային կոնֆերանս Միացեալ Ազգերի հիմնադրութեան առթիւ: Հայկական պահանջների ներկայացում:

1947-ից ամերիկեան քաղաքացի:

1947-ի աշնան՝ Հ. Յ. Դ. Ընդհ. Ժողով Գահիրէում:

Գուրգէն Մխիթարեանի Ամերիկա գալով՝ սրում են Ամերիկայի ներքին պայքարները Ամերիկայի մեր կազմակերպութեան մէջ:

1951 թ. Պատգամ. Ժողով - այլանդակութիւններ:

1951 թ. աշնան՝ Հ. Յ. Դ. Ընդհ. Ժողով Գահիրէում:

Ճեմարանի տնօրէն՝ 1952 Յունուարից սկսած մինչեւ այժմ...

* * *

Ինչպէս տեսնում ես, մինչեւ այժմ խօսքը միայն կուսակցական, հասարակական գործունէութեան մասին էր: Բայց, որքան որ ես ճանաչում եմ ինձ, իմ կոչումս աւելի մտաւոր-գրական էր: Աղբալեանի պէս, ես էլ կարող եմ ասել. սուրը չթողեց, որ գրող դառնամ, գրիչը չթողեց, որ զինուոր դառնամ: Վաղ պատանութիւնից սկսած ինձ գրաւում էր գիտութիւնն ու գրականութիւնը, բայց Ռաֆֆին ու Գամառ-Քաթիպան թոյլ չտուին եւ մղեցին ինձ հասարակական ասպարէզ: Այդ նշանակում է, երեւի, որ գրականութիւնն էլ, հասարակական գործն էլ իմ մէջ հաւասարապէս ուժեղ էին, աւելի ճիշտ հաւասարապէս թոյլ էին, որ մէկը թոյլ չտուեց, որ միւսը յաղթանակէ: Իբրեւ պատանի, ես երազում էի «Սասունը ազատել», բայց նոյն ժամանակ երազում էի Պուշկինի նման հայ գրող դառնալ: Սասունը թշնամի էր Պուշկինի...

Ես գրել սկսել եմ աշակերտական նստարանի վրայից, Ճեմարանում, եւ աշակերտական թերթերում: Ճեմարանի վերջին լսարաններում թղթակցութիւններ եւ յօդուած-

ներ, նոյնիսկ ոսանաւորներ էի ուղարկում «Մշակ» լրագրին, «Աղբիւր» մանկական ամսական ամսագրին, Տիգրան Նազարեանի «Տարազ»-ին: Ինչը եւ երբ տպուել էր, ի նչ ծածկանունով - բոլորովին մոռացել եմ:

1907-ին գրում էի Նոր Նախիջեւանի «Նոր կեանք» թերթում Վուլկան, Սիգ եւ այլ ծածկանուններով: Պետերբուրգից աշխատակցում էի «Ազատամարտ»-ին Ս. Վրացեան անունով:

Պետերբուրգում խմբագրեցի Եղ. Թոփչեանի յիշատակին նուիրուած «Պսակ» ժողովածուն, որ Մոսկուայում տպուեց 3000 օրինակ, բայց 2999 օրինակը գրաւեց եւ այրեց Ժանդարմանական վարչութիւնը: Մէկ օրինակ միայն հասաւ ձեռքս: Այժմ Մարտիկեան թանգարանում է, Բէյրութում:

1910-11 թ. եղայ Կարինի «Յառաջ» թերթի խմբագիր, մէկ տարի:

1911-1914 Մայիս՝ Բոստոնի «Հայրենիք» թերթի խմբագիր:

Շաբաթաթերթ «Հայրենիք»-ը դարձրի երկօրեայ թերթ: Հայկական տպագրութեան մէջ մտցրի առաջին տողաշարը (լինոտիպ) որէն Գալստեանի եւ Յ. Կոբոյեանի հետ:

Ամերիկայից աշխատակցում էի «Ազատամարտ»-ին, Կարինի «Յառաջ»-ին: Մէկ տարի Բոստոնից խմբագրեցի Ֆրեզնոյի «Ասպարէզ»-ը, որի խմբագիր նշանակուած էր Արտաւազդ Ռստիկեանը:

Թիֆլիսում աշխատակից, ապա խմբագիր «Հորիզոն»-ի: Գրել եմ «Армянский вестник»-ում, Մոսկուա, «Донская речь»-ում, Ռոստով, «Баку»-ում, Բաքու, «Молот»-ում, Թիֆլիս:

1918-ին, Սիմոն Մկրտչեանի հետ, հիմնեցի «Սուրհանդակ» շաբաթաթերթը, որի մէջի իմ մէկ յօդուածը Հայ Քրիստոնեայ ստորագրութեամբ ահագին յուզում առաջ բերեց վրաց մամուլում:

Թիֆլիսից աշխատակցում էի Բոստոնի «Հայրենիք»-ին 1914-20 թուականներին:

Երեւանում 1918-1919-ին խմբագիր՝ «Զանգ»-ին, «Հայկօտ»-ին:

Հ. Յ. Դ. Բիւրոյի որոշումով, 1919-ին հիմնեցի եւ խմբագրում էի մեր կուսակցութեան կենտրոնական օրգան «Յառաջ» օրաթերթը:

1920-ին Երեւանում հրատարակել եմ «Անկախ եւ միացեալ Հայաստան» գրքոյկը:

1925-33-ին՝ Փարիզի «Դրօշակ»-ի խմբագիր Ա. Ջամալեանի հետ:

1933-ին սկսեցի հրատարակել պատմութեան եւ մշակոյթի երկամսեայ հանդէս «Վէմ»-ը, մինչեւ 1939 թ., ընդամէնը 24 համար - Ա.-ԻԴ.:

1939-1951 թ. Ամերիկայում աշխատակցում էի «Հայրենիք» օրաթերթին եւ ամսագրին, «Ասպարէզ»-ին եւայլն:

1943-49 թ. կազմեցի «Հայրենիքի Տարեգիրք»-երը:

Հրատարակեցի «Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ», «The Armenian Question», անգլերէն եւ սպաներէն:

1955-ին լոյս տեսաւ իմ «Կեանքի ուղիներով» հատորը, 2000 օրինակ:

1958-ին «Հայաստանի Հանրապետութիւն» երկրորդ, վերամշակուած տպագրութիւնը, 3500 օրինակ:

ԴՐՕՇԱԿ

Դաշնակցական թեմ

Ռոստոմ

Աշխատակցել եմ, որքան յիշում եմ, հետեւեալ թերթերին. «Աղբիւր», «Տարազ», «Նոր կեանք» (Նոր Նախիջեւան), Թիֆլիսի մեր դաշնակցական թերթին, գլխաւորապէս «Գործ» եւ «Հորիզոն»-ին, «Ազատամարտ»-ին, Կարինի «Յառաջ»-ին, Բոստոնի «Հայրենիք»-ներին, Ֆրեզնոյի «Ասպարէզ»-ին, Բուէնոս Այրէսի «Արմենիա»-ին, «Դրօշակ»-ին, Սոֆիայի «Հայաստան»-ին, Աքէնքի «Նոր Օր»-ին, Գահիրէի «Յուսաբեր»-ին, Փարիզի «Յառաջ»-ին, Բէյրութի «Ազդակ»-ին, Թեհրանի «Ալիք»-ին եւայլն:

Գործածել եմ բազմաթիւ ծածկանուններ, որոնցից յիշում եմ՝ Սիգ, Վուլկան, Ս. Վրացեան, Ս. Մասուրեան, Ս. Սամուրեան, Մարգան, Պարճոնա, Մար Շիմոն, Սիմէլ Սէգ, Ս. Սուրեան, փրոֆ. Տանձեան եւայլն:

Ամերիկայում, ծանր հիւանդութիւնից յետոյ, առաքինման շրջանում, ձեռնարկել եմ գրելու մի վէպ «Մեր ժամանակները» անունով: Նպատակն էր տալ հայ կեանքի պատկերը առաջին համաշխարհային պատերազմից սկսած մինչեւ Փետր. 18 եւ տարագրութիւն: Լայն ծրագրով մի վէպ պիտի լինէր, ուր վիպական ձեւով պիտի ներկայացուէին ժամանակակից շատ դէմքեր - Ռոստոմ, Անդրանիկ, Արամ, Քեռի, Դրօ, ատիսեան, Քաջազնունի, Աիարոնեան եւայլն: Գրեցի մօտ 15 գլուխ, մինչեւ Ռուսաստանի խորհրդայնացումը եւ բրիական ճակատի փլուզումը: Ձեռագիրը թափառումներիս ժամանակ Ամերիկայում կորցրի: Այնուհետեւ տրամադրութիւն չունեցայ նորից սկսելու: Հիմա այլեւս ուշ է թէեւ ամբողջ վէպը գլխումս պատրաստ է: Ուղեղս դեռ թարմ է, բայց կամք չկայ այդպիսի ծանր գործի ձեռնարկելու:

Մի քանի թեթեւ գործեր ունեմ, որ պիտի ուզէի լրացնել:

«Կեանքի ուղիներով» մէկ կամ երկու հատոր եւս: Երկրորդ հատորի վրայ աշխատում եմ:

«Անձինք նուիրեալք» մէկ կամ երկու հատոր կենսագրականներ:

Մի հատոր պատմա-հրապարակախօսական յօդուածներ:

«Հին թուղթեր նոր պատմութեան համար» հատոր - իմ նամակները Հայաստանից Ամերիկայի Կենտ. Կոմիտէին 1914-1920 թուականներին: Կենտ. Կոմիտէին եւ զանազան անձանց:

Մի հատոր Յ. Քաջազնունիի գրուածքներ, որի ձեռագիրները իմ մօտ [են]:

«Մանրուք» մի հատոր իմ մնայուն արժէք ներկայացնող մանր յօդուածների ժողովածու**:

Եթէ Աստուած պարգեւ լինի գթառաս, այո , եւ մի քանի տարի էլ առողջ կեանք պարգեւէ, կը լրացնեմ այս բոլոր գործերը եւ հանգիստ սրտով կասեմ ձեզ ամէնուդ՝

- Good bye!

*) Նալբանդը ծածկանունն էր Ռոստով-Նոր Նախիջեւանի Հ. Յ. Դ. Կոմիտէութեան:

**) Վերեւ յիշատակուած անունները ամբողջական չեն. հոն չեն յիշուած, օրինակ, «Քանակցութիւններ Ազգ. պատուիրակութեան եւ Հայաստանի Հանրապետութեան միջեւ (1920 թ.), « արխատիմներ» (1924 թ.), «Հ. Յ. Դ. Վաքսունամեակ» (1890-1950) հատորները: Իսկ «Ինքնակենսագրութենէն» ետք, իր ողջութեան լոյս ընծայեց «Կեանքի ուղիներով» 2-6-րդ հատորները (1960-67 թ. թ.), մէկ հատոր «Հին թուղթեր նոր պատմութեան համար» (1962), մէկ հատոր «Անձինք նուիրեալք» (1969), այլեւ իր խմբագրութեամբ լոյս տեսան Յովհ. Քաջազնունիի գրուածքները՝ «Յետ մահու» խորագրով (1965):

ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՈՒԹԵՐԸ

Ռուբեն ՀՈՎՍԵՓՅԱՆ

Խնդիրներ կան, որ չեն լուծվում ոչ թե բարդության պատճառով, այլ՝ որովհետև սխալ են կազմված լինում: Նույնիսկ աննշան սխալը ընդունակ է ավերելու լուծման ողջ գործընթացը: Սխալը, առհասարակ, աշխատում է լուծման դեմ: Նույնիսկ աննշան սխալը նոր և այլ խնդիրներ է ծնում:

Ղարաբաղյան հակամարտության կարգավորման խնդիրը բարդերից է, բայց անպայման իր լուծումն ունի, եթե խնդիրը կազմելիս (ով էլ որ կազմելիս լինի) բացառվի սխալի սողոումը:

Որն է խնդրի կազմման ելման կետը. Ադրբեջանը տարածքային ամբողջականության սկզբունքով է առաջնորդվում, Լեռնային Ղարաբաղը՝ ազգերի ինքնորոշման իրավունքն է իրացնում:

Մի կողմ թողնելով Ադրբեջանի տարածքային ամբողջականության հիմնավորման սնանկությունը, որ ցանկության դեպքում կարելի է ջրի երես հանել թե պատմականորեն և թե իրավագիտորեն, հարց տանք միջնորդ-հաշտարարներին՝ ուրիշ էլ ինչպե՞ս է իրացվում ազգերի ինքնորոշման սկզբունքը, եթե ոչ տարածքային ամբողջականության սկզբունքը խախտելով: Որևէ աշխարհամասում, որևէ ժամանակ, ինքնորոշվե՞լ է որևէ ազգություն, առանց կազմախանդելու այս կամ այն տարածքային ամբողջականությունը: Չե՞ք ցանկանում պատմության մեջ խրվել, չե՞ք ցանկանում իրավագիտորեն մոտենալ հարցին, ապա բարի եղեք ընդունել իրողությունը, որն, ի դեպ, արդյունք է հենց պատմականության և իրավագիտության ինքնագիտակցման: Այլ կերպ չի էլ լինում ինքնորոշումը:

Լիսաբոնյան ուրվագծվող մոտեցումներում, սակայն, ինձ ոչ այնքան տարածքային ամբողջականության և ազգերի ինքնորոշման սկզբունքների հակադրությունն է մտահոգում, որքան «փախստականների վերադարձի» դրույթը, ինչով էլ, ի դեպ, պայմանավորվում է կարգավորման ողջ ընթացքը: Առաջին հայացքից շատ էլ նկատելի չէ այդ պայմանավորվածությունը, քողարկված է մարդասիրական քողի տակ: Անշտան սխալն է, սովորաբար, նման վարք ցուցաբերում, չի նկատվում՝ ծպտվում է կամ թաքնվում:

Խոսք է պարզապես:

Ի՞նչ է հետևում այս դրույթից. խոսքն, անշուշտ, վերաբերում է միայն Ղարաբաղը լքած ադրբեջանցիներին: Հակամարտության տարիներին և դրանից էլ առաջ Ղարաբաղից հարկադրաբար հեռացած հայերի մասին խոսք չկա և չի կարող լինել: Խոսք չկա նաև Ադրբեջանի տարբեր բնակավայրերից փախած հայերի մասին: Այնպես է դուրս գալիս, որ Ղարաբաղից ադրբեջանցիներին վռնդել են, իսկ նույն Ղարաբաղից և ողջ Ադրբեջանից փախած հայերը կամավոր են լքել իրենց տները, աշխարհը տեսնել են ուզել: Ոչ Սումգայիթ է եղել, ոչ Բաքու ու Կիրովաբադ, ոչ Գեյչեն ու Շահումյան:

Միտքս տեղ հասցնելու համար, ենթադրենք, նույնիսկ, որ ոչ մի հայ էլ չի ապրել Ադրբեջանում և, ուրեմն, բռնություններ էլ չեն եղել ու փախուստ էլ չի եղել: Միայն ադրբեջանցիներն են ստիպված եղել փախչել Ղարաբաղից: Հիմա, ըստ մադրիդյան մարդասերների, նրանք պետք է վերադառնան և իրենց վերադարձով պայմանավորեն ապագա հանրաքվեն:

Երկու աննկատ խոսք կա այս մոտեցման մեջ. ապագա հանրաքվեն «այո» է ասելու ինքնորոշմանը թե ադրբեջանցիների մասնակցությամբ և թե առանց իրենց, ինչպես և եղել է: Ուրեմն՝ ի՞նչ կարիք կա նրանց վերադարձի հետ կապել հանրաքվեի խնդիրը: Հանրաքվեի օրը հո ողջ Ադրբեջա՞նը չի ներխուժելու Ղարաբաղ: Վերադառնալու են նրանք, ովքեր հեռացել են: Իսկ նրանց թիվը հայտնի է:

Եվ երկրորդ աննկատ խոսքը, որ մարդասիրական դեմքով է հանդես գալիս. մարդիկ պիտի իրենց տուն վերադառնան: Այս դրույթը թղթին հանձնողը երբևիցե պատկերացրե՞լ է այն

Շուշի

ադրբեջանցուն, որը պիտի վերադառնա, ասենք, Շուշի: Նրա տունը կա՞: Նրա հողամասը կա՞: Նրա կահ-կարասին կա՞: Նրա հարևանությունը կա՞: Նրա աշխատանքը կա՞: Ինչպե՞ս է նա ապրելու: Հույժ կենսական այս հարցերը ո՞վ է լուծելու: Բրայզայական ժպի՞տը:

Վերադարձող ադրբեջանցին դեռևս թշնամի է հայի համար, պարոնայք մարդասերներ: Եվ հայն է ադրբեջանցու համար թշնամի: Եթե թշնամի էլ չեն, համակեցությանը դեռևս պատրաստ չեն: Ո՞վ է սիրելու հային հաշտ նայել ադրբեջանցուն: Ո՞վ է սիրելու ադրբեջանցուն հաշտ նայել հային: Սիրելով հո չի՞ հաշտ նայելը: Ո՞վ է երաշխավորը, որ հենց հրանցիկ ոչ հաշտ մի հայացքից ադրբեջանցին կամ հայը քար չեն վերցնելու ձեռքները, էլ չեմ ասում զենքի մասին, որ ինքնապաշտպանական բնազդով, երկու կողմերն էլ պիտի որ պահած լինեն: Ո՞վ է երաշխավորը լինելու նրանց անվտանգության: Լեռնային Ղարաբաղի իշխանությունն՞երը... Շատ մեծ բեռ է ու մեծ պատասխանատվություն: Ադրբեջա՞նը... Բայց նա ի՞նչ իրավունքով է երաշխավոր դառնալու թեկուզև ժամանակավոր ինքնուրույն կարգավիճակ ունեցող երկրում: Միջնորդ-հաշտարարնե՞րը... Բան ու գործը թողած այդ ամերիկացիները, ֆրանսիացիները, ռուսները ինչպե՞ս են հսկելու հայի ու ադրբեջանցու բազմատեսակ ու բազմաբնույթ շփումների վտանգավոր դրսևորումները:

Մի՞թե պարզ չէ, որ ադրբեջանցին ու հայը, առայժմ, մեկմեկու հետ, միասին չեն կարող ապրել: Դաժա՞ն է հնչում: Բայց սա է ճշմարտությունը: Ոչ հայն է մոռացել ադրբեջանցու արածը, ոչ ադրբեջանցին՝ հայինը: Արյունը դեռ չի չորացել: Վերքը դեռ չի սպիացել: Ինչո՞ւ են շտապում միջնորդ-հաշտարարները: Ինչո՞ւ է անվերջ ժպտում Բրայզան և, իբր, հավասարությունը, հավասարակշռությունը պահպանելու համար Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքը կոչում Ստեփանակերտ-Խանքենդի... Այդ միջնորդ-հաշտարարները ինչո՞ւ թույլ չեն տալիս, որ ժամանակը, այդ մեծ աղաքինողն ինքը, բնական ճանապարհով, իրագործի հարևան այս ժողովուրդների մերձեցումը:

Շտապելով նրանք նոր վերքեր են առաջացնելու: Շտապելով, մեղա-մեղա, նոր արյուն են հեղելու: Միասին, իրար հետ ապրելու ժամանակը դեռ չի հասունացել: Հարկավոր է ապրել կողք-կողքի:

Ահա այս մոտեցմամբ կլուծվի խնդիրը: Այս մոտեցմամբ կարելի է հասնել հաջողության: Այլ ուղի չկա: Այլ ուղիները խութեր ունեն:



Օսմանեան պարլամենտը գումարուեց ամբողջ քաղաքակիրթ աշխարհի ջերմ շնորհաւորանքների մէջ: Ցոյցերից, հաւաքական բաղձանքների աղմկայոյզ արտայայտութիւններից յետոյ եկաւ վայրկեանը, երբ այդ բաղձանքները պիտի դառնան կոնկրետ իրականութիւն:

Կատարուեցին և բացման անհրաժեշտ ձեւականութիւնները, որոնք չանցան առանց «պիկանտ» տեսարանների: Աբդիւլ Համիդը ապրեց դարձեալ մի պատմական mauvais quart d'heure: Հոգեկան տագնապի մէջ նա չունեցաւ այն սփոփանքը, որ յեղափոխական առաջին Դումայի բացման միջոցին բաժին ընկաւ ռուսական ցարին: Նա ստիպուած եղաւ անձամբ ողջունել պատգամաւորական ժողովի բացումը, անձամբ կատարել իր «ինքնաժըխտումը»... Եւ տիրանի մեռելային կերպարանքը, լցուած ներքին անյաղթելի գարշանքով, մի քանի վայրկեան մնաց արձանացած իր օթեակում, վեհերոտ ու դողդոջուն – ամբողջ ժողովի պաղ, դժնդակ լռութեան մէջ... Դա մի վայրկեան էր, որի նմանը դեռ չէր տեսած Արևելքի բազմաչարչար մարդկութիւնը և որ արժանի է արձանագրելու տիեզերական պատմութեան էջերում...

Եւ հնչեց գահական ճառը... հիւսուած նոյն աղաղակող կեղծիքներից, որոնցից հիւսուել են բոլոր նեղն ընկած բռնաւորների գահական ճառերը: Աբդիւլ Համիդ բռնաբարելով պատմական ճշմարտութիւնը, յայտարարեց, թէ «իր անսասան բաղձանքն է՝ որ Թիւրքիան կառավարուի սահմանադրական ձևով» և թէ ինքը նորէն տալիս է սահմանադրութիւնը ժողովրդին, ինչպէս որ վերցրել էր երեսուն տարի առաջ, «ժողովրդի տհաստութեան պատճառով»...

ՄԵԾ ԿՆՃԻՌՆԵՐԻ ՀԱՆԴԷՊ

Հանդիսաւոր բացումից յետոյ – հանդիսաւոր խրախճան Եըլդըզի ապարանքում: Ապօթէօզ... ինչի՞... Ազատութեա՞ն, թէ Արեան... Պառաւ աղուեսը իր դերի մէջ է. նա պահպանում է ամբողջ սրահը իր իժային հիպնօզի տակ: Ահմէդ Բիզան ևս իր «կոչման» բարձրութեան վրա է. այդ օպպօրտիւնիստ միջակութիւնը, որ թիւրիմացութեամբ տեղ է բռնել յեղափոխականների շարքերում, մատնում է արդէն իր «ներքին մարդը»: Աբդիւլ Համիդը սիրահարուել է նրա վրայ,- և սէրը փոխադարձ է... «Մեշվերեթի» խմբագիրը այժմ պալատի թանկագին հիւրն է, և անտարակոյս, մտերմական զրոյցների մէջ չի մոռանում շեշտել փատիշահի առջև իր անցեալ «համակրութիւնները», հաստատել դօկումենտներով, որ ինքը յաճախ նոյն «Մեշվերեթի» մէջ պաշտպան է կանգնել սուլթանական իրաւունքների՝ ընդդէմ հայասէր Եւրոպայի, որ նա իր գրչով հալածել է միշտ հայ, բուլգար, մակեդոնացի յեղափոխականներին... Այժմ էլ ահա, Եըլդըզի պալատում, պատգամաւորական ժողովի հանդէպ մի տեսակ հորթային հրճւանքի մէջ՝ նա գովք է կարդում Կարմիր խալիֆին, համիսլամական բարձրագոչ զառանցանքները համեմում են ժեռն-թիւրքական հայրենասիրութեան պոռթկումների հետ, և Եըլդըզը թնդում է ծափահարութիւնների որոտից...

Եւ այդ արեան ապօթէօզին - ցաւ է յիշել - մասնակցում են մի քանիսը հայ պատգամաւորներից, մի քանի «խոհեմ» ու գետնաքարշ «ազգայիններ», որոնց թիւը, տարաբախտաբար, դեռ լէգէօն է մեր տղմոտ իրականութեան մէջ... «Փօլիթիկի» անարգ նկատումներով նրանք չը կամեցան յետ կենալ այդ ներօնական խրախճաններից... Դառն է... Անցնենք:

Եւ ահա մենք պարլամենտի ու նրա լուծելիք մեծամեծ *կնճիռների հանդէպ:* Օսմանեան յեղափոխութիւնը պիտի սկսէ այժմ վերաշինութեան աշխատանքը: Բայց արդէն յոռետեսութեան շեշտեր են հնչում համաշխարհային մամուլի մէջ:

Զեղծումներ՝ ընտրութիւնների ընթացքում, զեղծումներ՝ պարլամենտի հէնց առաջին նիստերի միջոցին... Պատգամաւորական ժողովի ճնշող *մեծամասնութիւնը* շատ քիչ է պարունակում իր մէջ անհատներ, որոնք իրենց քաղաքացիական պարտաւորութիւնների գիտակցութիւնն ունենան. նրանք ներկայացնում են մի զանգուած, որ դիւրութեամբ կարող է խաղալիք դառնալ շատ թէ քիչ «կրթուած» դեմագօգների ձեռքերում... Ժողովի մէջ ընդունում են

հռչակաւոր խուլիգանապետեր, ջարդի ու աւերի կազմակերպողներ, և հայ անդամների բողոքները այդ առիթով մնում են իբրև անապատի մէջ բարբառող ձայներ: Կ'առաջանա՞ն արդեօք այդ մեծամասնութեան մէջ շերտաւորումներ - ցոյց կը տայ մօտիկ ապագան. առայժմ պարլամենտին տոն տուողը նոյն «Միութիւն ու Առաջադիմութիւն» կուսակցութիւնն է, որ տակաւին չի ներկայացրել հստակ ծրագիր ու աշխարհահայացք: Ծրագիրները գիտակցականութեան չափանիշ են. երբ նրանք չը կան – ասել է՝ չը կայ կամ թոյլ է գիտակցութիւնը մի յայտնի մարմնի շարքերում:

Վատ սկսուեց... Սակայն դա անակնկալ չէր մեզ համար, այլ հասկանալի ու անխուսափելի իրողութիւնների շարք, խոպան անապատ մի միջավայրում, ուր ճշմարիտ կուլտուրայի սերմերը ընկել են միշտ ապառաժի վրայ, ուր կրօնը միշտ եղել է գերագոյն ղեկավարը, ուր մինչև օրս չը կայ տակաւին *մշաւորականութիւն* բառիս իսկական նշանակութեամբ...

Ոչ, անտարակոյս. Յեղափոխութիւնը չէր կարող մոգական գաւազանի մի հարուածով յեղաշրջել մի բազմադարեայ հոգեբանութիւն, ազատութեան գիրկը նետել խաւարակուռ մի գոյութիւն... Չը զարմացնենք, ուրեմն, աշխարհը՝ մեր միամիտ ողբերով, այլ ապաւինենք մեր ուժերին և առաջ գնանք՝ միշտ քննադատելով ու պայքարելով:

Սկսում է օրէնսդրական աշխատանքը և Թիւրքիայի բոլոր ազատախոհ հատուածները պիտի հսկեն, որ սահմանադրութեան սկզբունքները դառնան իրականութիւն: Երկրի շահը պահանջում է խաղաղութեամբ վերջացնել արտաքին քաղաքականութեան առկախ մնացած կնճիռները և կենտրոնացնել պետութեան համեստ ֆինանսները ներքին բարեկարգումների վրայ: Ազգային ներկայացուցչութեան առաջին մտահոգութիւնը պիտի լինի՝ հաստատել ճշմարիտ ժողովրդական գերիշխանութիւն: Դրա համար անհրաժեշտ է սահմանել ընտրողական մի սիստեմ, որպէսզի պարլամենտը լինի իրօք համաժողովրդական ներկայացուցչութիւն. յեղափոխական ողջամտութիւնը պահանջում է կառավարութեան գլուխ կանգնեցնել նոր ու ժամանակակից անհատներ և հեռու պահել իշխանութեան ղեկից այն բոլոր զառամեալ կուրտիզաններին, որոնք չեն կարող համապատասխանել նորագոյն առաջադիմութեան պահանջներին: Տարաբախտաբար, այդ կողմից օսմանեան պարլամենտի մեծամասնութիւնը պահանջկոտ չեղաւ և Քեամիլ փաշայի մինիստրութիւնը դժուար թէ փայլուն գրաւական լինի վաղուան դժուարին ու պատասխանատու խնդիրների լուծման համար:

Վաղուան գործը հսկայական է: Բաւական է յիշել, որ հանրային գոյութեան բոլոր ֆունկցիաները - վարչական, դատաստանական, ֆինանսական և այլն - պիտի ենթարկուին հիմնական վերիվայրումի՝ նոր, սահմանադրական օրէնքի խարիսխի վրայ: Այն ի կատար ածելու համար անհրաժեշտ են մեծ միջոցներ... Իսկ երկիրը - ուժասպառ ու սովամահ... Նոր պետական իմաստութիւնը, այնուամենայնիւ, կարող է ելք գտնել՝ առանց դիմելու նախկին ռեժիմի միջոցներին: Հարկային ամբողջ սիստեմը պիտի բարեփոխուի այնպէս՝ որ հարկատուն գիտնայ հաստատապէս, որ իր տուրքը իրօք պիտի մտնէ պետական գանձարանը: Պէտք է ուժ տալ երկրի արտադրողական կարողութիւններին, զարգացնել հաղորդակցութիւնն ու առևտուրը: Պէտք է ամենից առաջ իրագործել աշխատանքի ամենատարրական պայմանը՝ *հանրային ապահովութիւնը:*

Քաղաքական-վարչական մեխանիզմի յեղաշրջումը առ այժմ այն առանցքն է, որի շուրջը պտտում են բոլոր ուրիշ խնդիրները: Նրանից սերտ կախումն ունի *ազգային հարցը,* ցեղական յարաբերութիւնների մեծ կնճիռը: Պատգամաւորական ժողովի մէջ մեծամասնութիւն կազմող թիւրքերի կողքին նստած են յոյներ, քրդեր, հայեր, արաբներ, ալբաններ, սլավներ, որոնք այնպէ՞ս խէթ են նայում իրարու վրայ և բոլորն էլ՝ գերակշռող մեծամասնութեան վրայ:

Տաճկաստանը բնաւ, դժբախտաբար, չի ներկայացնում նորագոյն տիպի ազգային պետութիւն (Nationalstaat). նա չի մօտենում ոչ Աւստրիային, ոչ իսկ Ռուսաստանին: Վերջիններիս մէջ, չը նայած այլ և այլ տարրերի մրցման ու հակամարտութեան, կայ, այնուամենայնիւ նրանց միջև քաղաքակրթական որոշ *ազգակցութիւն,* նմանութիւն: Օսմանեան կայսրութիւնը տարբեր ցեղերի մի հաւաքոյթ է, մի կօնգլօմերատ, նման մօտաւորապէս հին Հռոմին. նրա առանձին հատուածները չեն շաղկապում բնական կապերով, կուլտուրական ազգակցութիւնը բացակայում է, *շաղախը* չը կայ...

Այդ շաղախն է, որ պէտք է ստեղծել. իսկ նա կը ստեղծուի միայն և միայն *ժամանակակից իրաւակարգի* հաստատումով, որի ընդարձակ, ռամկավարական շրջանակներում բոլոր ազգերը, հաւասար իրենց իրաւունքներով և հաւասար պարտաւորութիւններով, աստիճանաբար կը տոգորուին համերաշխութեան մեծ դաւանանքով և ի վերջոյ կը ձուլուին ի մի ընդհանուր, քաղաքակիրթ հասարակութիւն:

Որքան որ ճանաչում եմ Ռուզան Առաքելյանին, երիտասարդ լրագրողուհուց մինչև ՀՀ ԱԺ պատգամավոր, կյանքի մի ուրույն ճանապարհ է ընտրել իր համար ու այդ ճանապարհի ողջ լայնքով ու երկայնքով օր-օրի, հատիկ-հատիկ տեղավորում է մեծ աշխարհից ստացած ազդակներն ու տպավորությունները, այդ ամենի վրա կառուցած իր հավատամքի տան հիմնաքարերն ու սյուները: Այս տան հյուրերն իր բոլոր ժամանակակիցներն են, ում Ռուզանը փորձում է համոզել, հաճախ նաև ստիպում է հավատալ, որ իրենք այն բախտավոր սերունդն են, որ ականատեսն են ու մասնակիցը 1988-ի զարթոնքի, Արցախի ազատագրական պայքարի, ազգային գաղափարախոսության վերահիմնաստավորման ու հայ օջախներ նրա անվարան մուտքի: «Հայրենիքի ազատագրման համընդհանուր պայքարը մտավ ամեն հայի տուն... Սերունդներ ապրեցին այդ օրերի հույսով, ցավոք առիթը չունեցան մասնակիցը դառնալու հայրենի պետականության կայացման: Այսօրը մեզ բաժին ընկավ...»:

Հիրավի բախտավորություն է, ազգային միասնության ոգով ձեռք բերված մեծագույն հաղթանակ, որ լիուլի կբավարարի նաև գալիք սերունդներին: Բայց արի ու տես, որ մենք՝ այդ հաղթանակը կռողներս, քաղաքական շահարկումների ու նեղ առաջնահերթությունների զոհ գնալով, արդեն իսկ սկսել ենք մսխել մեր ձեռքբերումները: Մինչդեռ պառակտումն այսքանից հետո անթույլատրելի է՝ Արցախի պայքարը միայն արցախցու գործը չէ, Գորիսի հոգսն ու ցավը՝ գորիսեցունը: Ամենքինս է, ողջ հայությանը:

Այս ու նման հիմնաքարերով է իր հավատամքի տունը կառուցում Ռուզան Առաքելյանը: Եվ որպեսզի այն լինի գեղեցիկ ու մեր ընթացքին ներդաշնակ, նրա պատերին տեղադրում է հայ քաջորդիների, անցյալ ու ներկա մտավորականների, հայ քաղաքական ու կուսակցական գործիչների լուսավոր դիմապատկերները:

Կարդալով այս գրքույկը՝ քեզ մի պահ թվում է, որ թերթում ես քո ապրած ժամանակի երեկվա, երեկ չէ առաջին օրվա էջերը և հանկարծ տեսնում, որ իրականում այնքան էլ շատ բան չի փոխվել այսօր. նույն խնդիրներն են, նույն հրապարակը, նույն մարդիկ: Ապագայի տեսլականն էլ նույնն է՝ հայության միասնական ու արդար հայրենիքի երազը: Այս է թերևս պատճառը, որ ընթերցողները, ովքեր արդեն ծանոթ են Ռուզան Առաքելյանի՝ Հայաստանի և սփյուռքահայ մամուլում լույս տեսած հոդվածների երկրորդ ընտրանուն, միանշանակ պնդում են, որ գրքույկում տեղ գտած հրապարակախոսական հոդվածներն այսօր էլ արդիական են, դրանցում արծարծված խնդիրներից շատերն այս պահին էլ դեռ կարոտ են հանգուցալուծման:

Էդիկ Անդրեասյան

Ռուզան Առաքելյան
Հավատամք
Երևան, 2008, 128 էջ



Արմեն Խոջոյան

Ս կարիչ Արմեն Խոջոյանի արվեստը հագեցած է հայկական դիցաբխարհի և ավանդապատումների վերապրումներով:

Նրա նկարներն ու կոլաժներն իրենց մեջ կրում են հին Արևելքից սերող գաղտնաթաքուն սիմվոլիկան և այլաբանությունը, որոնց միախառնվում է արբապատկերագրությունից ծնված սերն ու լույսը:

Ինչ վերաբերվում է նրա բնանկարներին, ապա դրանցում առկա է կորսված մանկության կարոտն ու պայծառությունը, առանց որի չի կարող ապրել ոչ մի արվեստագետ:



ԴՐՈՇԱԿ

Պատկերասրահ

ԴՐՕՇԱԿ